ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

**ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY
AFTER KHACHATUR ABOVYAN
DEPARTMENT OF PHILOSOPHY AND LOGIC
NAMED AFTER ACADEMICIAN GEORG BRUTIAN**



Երևան՝ 10, Տիգրան Մեծի 17
Հեռ.՝ 597 065
Էլ.փոստ ՝ chairofphilosophy@gmail.com; philos-logic25@aspu.am
Բլոգ՝ chairoflogicphiloscult.wordpress.com

Ереван: 10, Тиграна Меца 17
Тел.: 597 065
Эл.почта: ՝ chairofphilosophy@gmail.com; philos-logic25@aspu.am
Блог: chairoflogicphiloscult.wordpress.com

27.08.2019 թ.

# ՆԻՍՏ ԹԻՎ 1

Նիստին մասնակցում էին Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, պրոֆեսոր Ռոբերտ Ջիջյանը, դոցենտներ Սուսաննա Դավթյանը, Անդրանիկ Ստեփանյանը, Աշոտ Գևորգյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Դավիթ Մոսինյանը, Հրանտ Քոչարյանը, դասախոս Մարինե Շահբազյանը,Պետրոսյան Նելլի և ավագ մասնագետ Գայանե Աբգարյանը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. 2019-2020 ուս. տարվա ամբիոնի աշխատանքային ծավալի ներկայացում:
2. 2019-2020 ուս. տարվա դասախոսների ծանրաբեռնվածության ներկայացում:
   *Զեկուցող՝ Հ.Հովհաննիսյան:*
3. 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասացուցակների տրամադրում:
4. 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների քննարկում և հաստատում:
   *Զեկուցողներ՝ Ռ.Ջիջյան,Ս.Դավթյան, Ա.Ստեփանյան, Ա.Գևորգյան, Հովհ.Հովհաննիսյան, Դ.Մոսինյան, Հ.Քոչարյան, Մ.Շահբազյան,Ն.Պետրոսյան:*
5. 2019-2020 ուս. տարվա միջանկյալ ստուգումների և քննական հարցաշարերի հաստատում:
   *Զեկուցող՝ բոլոր:*

**ԼՍԵՑԻՆ՝** օրակարգի առաջին հարցը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝** Ամբիոնի վարիչ Հ.Հովհաննիսյանը, ով տեղեկացրեց, որ Ամբիոնի 2019-2020 ուս. տարվա ուսումնական աշխատանքի ծավալը կազմում է 6454 ժամ, որից 450 ժամը մնացել է թափուր՝ հաշվի առնելով առաջին կուրսերի ուսանողների ենթադրյալ թվի միջական ավել հաշվարկի փաստը: Նա հավելեց, որ նախորդ տարիների փորձը ցույց է տվել, որ նախնական ծավալի համեմատ նոյեմբերին հաստատվող վերջնական ծավալը 1-ին կուրսերի ժամաքանակի տեսանկյունից գրեթե կեսով, կամ նույնիսկ որոշ դեպքերում կեսից ավելով, կրճատում է: Հ.Հովհաննիսյանը նկատեց, որ մնացած ժամաքանակը ամբիոնի դասախոսների միջև բաշխվել է հետևյալ կերպ՝

| Թիվ | ԱԱՀ | Կոչում, գիտ.աստիճան, պաշտոն | Հաստիք | Ծանրաբեռնվածութ-յան միավորը (ժամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Հովհաննիսյան Հասմիկ Հովհաննեսի | փ.գ.դ., դոցենտ, ա/վ | 1 | 815 |
| 2 | Ջիջյան Ռոբերտ Զալիբեկի | փ.գ.դ., պրոֆեսոր | 1 | 714 |
| 3 | Օհանյան Քաջիկ Մարտիրոսի | փ.գ.դ., պրոֆեսոր | 0,25 | 182 |
| 4 | Գևորգյան Աշոտ Արամայիսի | փ.գ.թ., դոցենտ | 1 | 811 |
| 5 | Ստեփանյան Անդրանիկ Արամայիսի | փ.գ.թ., դոցենտ | 1 | 823 |
| 6 | Մոսինյան Դավիթ Ռոմիկի | փ.գ.թ., դոցենտ | 0,5 | 446 |
| 7 | Հովհաննիսյան Հովհաննես Օնիկի | փ.գ.թ., դոցենտ | 0,5 | 416 |
| 8 | Դավթյան Սուսաննա Համբարձումի | փ.գ.դ., դոցենտ | 0,5 | 408 |
| 9 | Քոչարյան Հրանտ Ժորայի | փ.գ.թ., ասիստենտ | 0,5 | 462 |
| 10 | Շահբազյան Մարինե Կարապետի | դասախոս | 0,5 | 466 |
| 11 | Պետրոսյան Նելլի Լևոնի | դասախոս | 0,5 | 461 |

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հետևել յուրաքանչյուր դասախոսի ծանրաբեռնվածության իրականացմանը, դրա հիման վրա դասացուցակների կազմմանը, ինչպես նաև Google Classroom էլ. հարթակում 1-ին կիսամյակում դասավանդվող դասընթացների համապատասխան էջերի ստեղծմանը:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:

**ԼՍԵՑԻՆ՝** 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասացուցակների տրամադրման հարցը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝** Ամբիոնի ավագ մասնագետ Գ.Աբգարյանը, ով ամբիոնի դասախոսներին խնդրեց ամենաուշը մինչև սեպտեմբերի 2-ը տրամադրել 2019-2020 ուս. տարվա առկա ուսուցման համակարգի 1-ին կիսամյակի դասացուցակները՝ ըստ համապատասխան ձևաչափի, որն արդեն ուղարկվել է դասախոսների էլ. փոստերին:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** մինչև սեպտեմբերի 2-ը տրամադրել 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասացուցակները հնարավորինս ավարտուն տարբերակով:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:

**ԼՍԵՑԻՆ՝** 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների քննարկման և հաստատման հարցը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝** պրոֆեսոր Ռ.Ջիջյանը, դոցենտներ Ս.Դավթյանը, Ա.Ստեփանյանը, Ա.Գևորգյանը, Հովհ.Հովհաննիսյանը, Դ.Մոսինյանը, ասիստենտ Հ.Քոչարյանը և դասախոս Մ.Շահբազյանը,Ն.Պետրոսյան, ովքեր ներկայացրեցին իրենց կողմից դասավանդվող դասընթացների առարկայական նկարագրերում և թեմատիկ տրոհումներում տեղ գտած փոփոխությունները, այդ թվում նաև գնահատման բաղադրիչների համապատասխանեցումը պահանջվող ձևաչափին.

**Քննական առարկաների համար**

Բաղադրիչ 1 – 30 % (միջանկյալ ստուգում 1)

Բաղադրիչ 2 – 30 % (միջանկյալ ստուգում 2)
Բաղադրիչ 3 – 10 % (հաճախում)
Բաղադրիչ 4 – 10 % (ընթացիկ ստուգում)
Բաղադրիչ 5 – 20 % (ամփոփիչ ստուգում)

**Ոչ քննական առարկաների համար**

Բաղադրիչ 1 – 30 % (միջանկյալ ստուգում 1)
Բաղադրիչ 2 – 30 % (միջանկյալ ստուգում 2)
Բաղադրիչ 3 – 10 % (հաճախում)
Բաղադրիչ 4 – 30 % (ընթացիկ ստուգում)

Նրանք նաև տեղեկացրին, որ ըստ ամբիոնի պահանջի առարկայական նկարագրերում հատուկ ուշադրություն է դարձվել միջանկյալ ստուգումների և հատկապես ընթացիկ ստուգման իրականացման ձևի ու քայլերի հստակ պահանջների, գնահատման սկզբունքների և չափանիշների մանրակրկիտ ներկայացմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել առարկայական նակարագրերը և թեմատիկ տրոհումները

| № | Դասախոս/ Սեմինարիստ | Առարկա/ Էլ. կոդ | Կուրս Ֆակ. | Բաղադրիչներ |
|---|---|---|---|---|
| **Զիջյան Ռոբերտ** | | | | |
| 1. | Զիջյան Ռոբերտ | **Փիլիսոփայություն** | ՍԿ-8 ԱԲ 2 | **Քննական առարկա**<br>Բաղադրիչ 1 – 30 % (միջանկյալ ստու-գում 1 - էսսե)<br>Բաղադրիչ 2 – 30 % (միջանկյալ ստու-գում 2 - էսսե)<br>Բաղադրիչ 3 – 10 % (հաճախում)<br>Բաղադրիչ 4 – 10 % (ընթացիկ ստուգում – գնահատվող հանձնարարություն Google Classroom հարթակում)<br>Բաղադրիչ 5 – 20 % (ամփոփիչ ստուգում – բանավոր քննություն) |
| 2. | Զիջյան Ռոբերտ | **Փիլիսոփայություն** | ՕԼ-10 ԱԲ 3 օտար | **Քննական առարկա**<br>Բաղադրիչ 1 – 30 % (միջանկյալ ստու-գում 1 - էսսե)<br>Բաղադրիչ 2 – 30 % (միջանկյալ ստու-գում 2 - էսսե)<br>Բաղադրիչ 3 – 10 % (հաճախում)<br>Բաղադրիչ 4 – 10 % (ընթացիկ ստուգում – գնահատվող հանձնարարություն Google Classroom հարթակում)<br>Բաղադրիչ 5 – 20 % (ամփոփիչ ստուգում – բանավոր քննություն) |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3. | Ջիջյան Ռոբերտ | **Փիլիսոփայություն** | ՕԼ-10<br>ԱԲ 3<br>Ռուս | **Քննական առարկա**<br>Բաղադրիչ 1 – 30 % (միջանկյալ ստուգում 1 - էսսե)<br>Բաղադրիչ 2 – 30 % (միջանկյալ ստուգում 2 - էսսե)<br>Բաղադրիչ 3 – 10 % (հաճախում)<br>Բաղադրիչ 4 – 10 % (ընթացիկ ստուգում – գնահատվող հանձնարարություն Google Classroom հարթակում)<br>Բաղադրիչ 5 – 20 % (ամփոփիչ ստուգում – բանավոր քննություն) |
| 4. | Ջիջյան Ռոբերտ | Ընտր/դաս (Գիտական աշխատանքի տեխնոլոգիա) | ՄՖԻ<br>ԱԲ 4 | Ոչ քննական առարկա<br>Բաղադրիչ 1 - 30% (միջանկյալ 1 - էսսե)<br>Բաղադրիչ 2 - 30% (միջանկյալ 2 - էսսե)<br>Բաղադրիչ 3 - 10% (հաճախում)<br>Բաղադրիչ 4 - 30 % (ընթացիկ ստուգում – գնահատվող հանձնարարություն Google Classroom հարթակում) |
| 5. | Ջիջյան Ռոբերտ | Ընտր/դաս (Գիտական աշխատանքի տեխնոլոգիա) | ԿՔԱ<br>ԱԲ 4 | Ոչ քննական առարկա<br>Բաղադրիչ 1 - 30% (միջանկյալ 1 - էսսե)<br>Բաղադրիչ 2 - 30% (միջանկյալ 2 - էսսե)<br>Բաղադրիչ 3 - 10% (հաճախում)<br>Բաղադրիչ 4 - 30 % (ընթացիկ ստուգում – գնահատվող հանձնարարություն Google Classroom հարթակում) |
| | | | | |
| | | **Դավթյան Սուսաննա** | | |
| 1. | Դավթյան Սուսաննա | Էթիկա և էթիկետ | Ա.Բ 2<br>ՊԻ-4<br>Հասարակա գիտ. | Ոչ քննական առարկա<br>Բաղադրիչ 1՝ 30 % (Միջանկյալ ստուգում 1. խմբային աշխատանք՝ բանավոր ներկայացմամբ)<br>Բաղադրիչ 2՝ 30 % (Միջանկյալ ստուգում 2. վերլուծական աշխատանք)<br>Բաղադրիչ 3՝ 10 % (Հաճախում)<br>Բաղադրիչ 4՝ 30 % (Ընթացիկ ստուգում. լսարանային ակտիվություն): |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2. | Դավթյան Սուսաննա | **Բիոէթիկայի հիմունքներ** | Ա.Մ 1 ՊԻ-4 Հասարակագիտ . | **Քննական առարկա**<br>Բաղադրիչ 1՝ % (Միջանկյալ ստուգում 1 – վերլուծական աշխատանք)<br>Բաղադրիչ 2՝ 10 % (Հաճախում)<br>Բաղադրիչ 3՝ % (Ընթացիկ ստուգում – լսարանային ակտիվություն)<br>Բաղադրիչ 4՝ % (Ամփոփիչ ստուգում – բանավոր քննություն) |
| | | Գևորգյան Աշոտ | | |
| 1. | Գևորգյան Աշոտ | **Փիլիսոփայության ներածություն** | Ա.Բ 1 ՊԻ-4 | **Քննական առարկա**<br>Բաղադրիչ 1 – 30 % (միջանկյալ ստու-գում 1 - թեստ)<br>Բաղադրիչ 2 – 30 % (միջանկյալ ստու-գում 2 – վերլուծական աշխատանք սահիկահանդեսի տեսքով)<br>Բաղադրիչ 3 – 10 % (հաճախում)<br>Բաղադրիչ 4 - 10 % (ընթացիկ ստուգում-լսարանային ակտիվություն և գնահատվող հանձնարարություն Google Classroom հարթակում)<br>Բաղադրիչ 5 – 20 % (ամփոփիչ ստուգում – բանավոր քննություն) |
| 2. | Գևորգյան Աշոտ<br><br>*Սեմինարավար՝ Հովհաննիսյան Հասմիկ* | **Փիլիսոփայություն** | Ա.Բ 2 Պի-4 պատմ | **Քննական առարկա**<br>Բաղադրիչ 1 – 30 % (միջանկյալ ստու-գում 1 - թեստ)<br>Բաղադրիչ 2 – 30 % (միջանկյալ ստու-գում 2 - թեստ)<br>Բաղադրիչ 3 –10 % (հաճախում)<br>Բաղադրիչ 4 – 10 % (ընթացիկ ստուգում-օնլայն թեստ)<br>Բաղադրիչ 5 – 20 % (ամփոփիչ ստուգում – բանավոր քննություն) |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3. | Գևորգյան Աշոտ | **Փիլիսոփայություն** | ԱԲ 2 Պի-4 Հասարակագետ | **Քննական առարկա**<br>Բաղադրիչ 1 – 30 % (միջանկյալ ստուգում 1 - թեստ)<br>Բաղադրիչ 2 – 30 % (միջանկյալ ստուգում 2 - ինքնուրույն աշխատանք սահիկահանդեսի տեսքով)<br>Բաղադրիչ 3 – 10 % (հաճախում)<br>Բաղադրիչ 4 – 10 % (ընթացիկ ստուգում - լսարանային ակտիվություն և գնահատվող հանձնարարություն Google Classroom հարթակում)<br>Բաղադրիչ 5 – 20 % (ամփոփիչ ստուգում - բանավոր քննություն) |
| 4. | Գևորգյան Աշոտ<br><br>*Սեմինարավար՝*<br>*Հովհաննիսյան Հասմիկ* | **Փիլիսոփայություն** | ԱԲ 2 ՍԿ-8 | **Քննական առարկա**<br>Բաղադրիչ 1 – 30 % (միջանկյալ ստուգում 1 - թեստ)<br>Բաղադրիչ 2 – 30 % (միջանկյալ ստուգում 2 - թեստ)<br>Բաղադրիչ 3 –10 % (հաճախում)<br>Բաղադրիչ 4 – 10 % (ընթացիկ ստուգում-օնլայն թեստ)<br>Բաղադրիչ 5 – 20 % (ամփոփիչ ստուգում – բանավոր քննություն) |
| 5. | Գևորգյան Աշոտ | **Փիլիսոփայություն** | ԱԲ 2 ԿՔԱ-3 | **Քննական առարկա**<br>Բաղադրիչ 1 – 30 % (միջանկյալ ստուգում 1 - թեստ)<br>Բաղադրիչ 2 – 30 % (միջանկյալ ստուգում 2 - թեստ)<br>Բաղադրիչ 3 –10 % (հաճախում)<br>Բաղադրիչ 4 – 10 % (ընթացիկ ստուգում-օնլայն թեստ)<br>Բաղադրիչ 5 – 20 % (ամփոփիչ ստուգում – բանավոր քննություն) |
| **Հովհաննիսյան Հովհաննես** | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Հովհաննիսյան Հովհաննես<br><br>*Սեմինարավար՝ Դավթյան Սուսաննա* | **Փիլիսոփայություն** | ԱԲ-2<br>ԿՀՍ-6<br>հոգեբ. | **Քննական առարկա**<br>Բաղադրիչ 1 – 30 % (միջանկյալ ստուգում 1 - գրավոր ստուգողական աշխատանք)<br>Բաղադրիչ 2 – 30 % (միջանկյալ ստուգում 2 - գրավոր ստուգողական աշխատանք)<br>Բաղադրիչ 3 –10 % (հաճախում)<br>Բաղադրիչ 4 – 10 % (ընթացիկ ստուգում – 2 գնահատվող հանձնարարություն Google Classroom էլեկտրոնային հարթակում)<br>Բաղադրիչ 5 – 20 % (ամփոփիչ ստուգում – բանավոր քննություն) |
| 2. | Հովհաննիսյան Հովհաննես<br><br>*Սեմինարավար՝ Հովհաննիսյան Հասմիկ* | **Փիլիսոփայություն** | ԱԲ-2<br>ԿՀՍ-6<br>սոց. | **Քննական առարկա**<br>Բաղադրիչ 1 – 30 % (միջանկյալ ստուգում 1 - գրավոր ստուգողական աշխատանք)<br>Բաղադրիչ 2 – 30 % (միջանկյալ ստուգում 2 - գրավոր ստուգողական աշխատանք)<br>Բաղադրիչ 3 –10 % (հաճախում)<br>Բաղադրիչ 4 – 10 % (ընթացիկ ստուգում – 2 գնահատվող հանձնարարություն Google Classroom էլեկտրոնային հարթակում)<br>Բաղադրիչ 5 – 20 % (ամփոփիչ ստուգում – բանավոր քննություն) |
| 3. | Հովհաննիսյան Հովհաննես | Ընտր/դաս (Փաստարկում և ճարտասանություն) | ԱԲ-4<br>ԿՀՍ-6 | Ոչ քննական առարկա<br>Բաղադրիչ 1 – 30 % (Միջանկյալ 1 - գրավոր ստուգողական աշխատանք)<br>Բաղադրիչ 2 – 30 % (Միջանկյալ 2 - գրավոր ստուգողական աշխատանք)<br>Բաղադրիչ 3 – 10 % (Հաճախում)<br>Բաղադրիչ 4 – 30 % (Ընթացիկ ստուգում – 2 գնահատվող հանձնարարություն Google Classroom էլեկտրոնային հարթակում) |
| **Ստեփանյան Անդրանիկ** | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Ստեփանյան Անդրանիկ | **Մշակութային մարդաբանություն** | Ա.Բ 1 ԳԿ-5 | **Քննական առարկա**<br>Բաղադրիչ 1 - % (Միջանկյալ ստուգում 1 - թեստ)<br>Բաղադրիչ 2 - % (Հաճախում)<br>Բաղադրիչ 3 - % (Ընթացիկ ստուգում՝ ռեֆերատ)<br>Բաղադրիչ 4 - % (Ամփոփիչ ստուգում) |
| 2. | Ստեփանյան Անդրանիկ | Կրոնի տեսություն և պատմություն | Ա.Բ 3 ՊԻ-4 Հասարակա գիտ. | Ոչ քննական առարկա<br>Բաղադրիչ 1 – 30 % (Միջանկյալ 1՝ թեստ)<br>Բաղադրիչ 2 – 30 % (Միջանկյալ 2՝ թեստ)<br>Բաղադրիչ 3 – 10 % (Հաճախում)<br>Բաղադրիչ 4 – 30 % ( Ընթացիկ ստուգում՝ լսարանային ակտիվություն ) |
| 3. | Ստեփանյան Անդրանիկ<br><br>*Սեմինարավար ՝Օհանյան Քաջիկ* | Ընտր/դաս (Կրոնի տեսություն և պատմություն) | ՀԿ-9 ԱԲ-4 | Ոչ քննական առարկա<br>Բաղադրիչ 1 – 30 % (Միջանկյալ 1՝ թեստ)<br>Բաղադրիչ 2 – 30 % (Միջանկյալ 2՝ թեստ)<br>Բաղադրիչ 3 – 10 % (Հաճախում)<br>Բաղադրիչ 4 – 30 % (Ընթացիկ ստուգում՝ վերլուծական աշխատանք) |
| 4. | Ստեփանյան Անդրանիկ | Ընտր/դաս (Մշակույթի փիլիսոփայություն) | ՕԼ-10 օտար ԱԲ-4 | Ոչ քննական առարկա<br>Բաղադրիչ 1 - 30% (Միջանկյալ 1 – գրավոր աշխատանք՝ թեստ)<br>Բաղադրիչ 2 - 30% (Միջանկյալ 2 – էսսե)<br>Բաղադրիչ 3 - 10% (Հաճախում)<br>Բաղադրիչ 4 - 30% (Ընթացիկ ստուգում՝ լսարանային ակտիվություն ) |
| 5. | Ստեփանյան Անդրանիկ | Ընտր/դաս (Մշակույթի փիլիսոփայություն) | ՕԼ-10 Ռուս. ԱԲ-4 | Ոչ քննական առարկա<br>Բաղադրիչ 1 - 30% (Միջանկյալ 1 – գրավոր աշխատանք՝ թեստ)<br>Բաղադրիչ 2 - 30% (Միջանկյալ 2 – էսսե)<br>Բաղադրիչ 3 - 10% (Հաճախում)<br>Բաղադրիչ 4 - 30% (Ընթացիկ ստուգում՝ լսարանային ակտիվություն ) |
| **Մուսինյան Դավիթ** | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Մոսինյան Դավիթ<br><br>*Սեմինարավար՝ Օհանյան Քաջիկ* | **Փիլիսոփայություն** | ԱԲ-2<br>Կ-7 | **Քննական առարկա**<br>Բաղադրիչ 1 – 30 % (միջանկյալ ստուգում 1 - թեստ)<br>Բաղադրիչ 2 – 30 % (միջանկյալ ստուգում 2 - թեստ)<br>Բաղադրիչ 3 – 10 % (հաճախում)<br>Բաղադրիչ 4 – 10 % (ընթացիկ ստուգում՝ լսարանային ակտիվություն)<br>Բաղադրիչ 5 – 20 % (ամփոփիչ ստուգում – բանավոր քննություն) |
| 2. | Մոսինյան Դավիթ<br><br>*Սեմինարավար՝ Ստեփանյան Անդրանիկ* | Ընտր/դաս (Մշակույթի փիլիսոփայություն) | ԳԿ-5<br>ԱԲ-4 | Ոչ քննական առարկա<br>Բաղադրիչ 1 – 30 % (միջանկյալ ստուգում 1 - գրավոր աշխատանք)<br>Բաղադրիչ 2 – 30 % (միջանկյալ ստուգում 2 - էսսե)<br>Բաղադրիչ 3 – 10 % (հաճախում)<br>Բաղադրիչ 4 – 30 % (ընթացիկստուգում՝ լսարանային ակտիվություն) |
| 3. | Մոսինյան Դավիթ<br><br>*Սեմինարավար՝ Հովհաննիսյան Հասմիկ* | Ընտր/դաս (Մշակույթի փիլիսոփայություն) | Կ-7<br>ԱԲ-4 | Ոչ քննական առարկա<br>Բաղադրիչ 1 – 30 % (միջանկյալ ստուգում 1 - գրավոր աշխատանք)<br>Բաղադրիչ 2 – 30 % (միջանկյալ ստուգում 2 - էսսե)<br>Բաղադրիչ 3 – 10 % (հաճախում)<br>Բաղադրիչ 4 – 30 % (ընթացիկ ստուգում՝ լսարանային ակտիվություն) |
| 4. | Մոսինյան Դավիթ<br><br>*Սեմինարավար՝ Ստեփանյան Անդրանիկ* | Ընտր/դաս (Մշակույթի փիլիսոփայություն) | ՀԿ-9<br>ԱԲ-4 | Ոչ քննական առարկա<br>Բաղադրիչ 1 – 30 % (միջանկյալ ստուգում 1 - գրավոր աշխատանք)<br>Բաղադրիչ 2 – 30 % (միջանկյալ ստուգում 2 - էսսե)<br>Բաղադրիչ 3 – 10 % (հաճախում)<br>Բաղադրիչ 4 – 30 % (ընթացիկ ստուգում՝ լսարանային ակտիվություն) |
| 5. | Մոսինյան Դավիթ | **Պատմության փիլիսոփայություն** | ՊԻ-4<br>Հասարակագետ.<br>ԱՄ-2 | **Քննական առարկա**<br>Բաղադրիչ 1 – 30 % (միջանկյալ ստուգում 1 - գրավոր աշխատանք)<br>Բաղադրիչ 2 – 30 % (միջանկյալ ստուգում 2 - էսսե)<br>Բաղադրիչ 3 – 10 % (հաճախում)<br>Բաղադրիչ 4 – 10 % (ընթացիկ ստուգում՝ լսարանային ակտիվություն)<br>Բաղադրիչ 5 – 20 % (ամփոփիչ ստուգում – բանավոր քննություն) |

| Քոչարյան Հրանտ | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Քոչարյան Հրանտ | Տրամաբանություն | ԱԲ-2<br>ՕԼ-10<br>Ռուս. | Ոչ քննական առարկա<br>Բաղադրիչ 1՝ 30 % (Միջանկյալ ստուգում 1 - գրավոր աշխատանք. վարժություններ, առաջադրանքներ՝ ըստ ուսումնասիրված թեմաների)<br>Բաղադրիչ 2՝ 30 % (Միջանկյալ ստուգում 2 - գրավոր աշխատանք. վարժություններ, առաջադրանքներ՝ ըստ ուսումնասիրված թեմաների)<br>Բաղադրիչ 3՝ 10 % (Հաճախում)<br>Բաղադրիչ 4՝ 30 % (Ընթացիկ ստուգում՝ ակտիվություն Google Classroom էլեկտրոնային հարթակում և գործնական դասաժամերին) |
| 2. | Քոչարյան Հրանտ | Ընտր/դաս (Տրամաբանություն) | ԱԲ-3<br>ԲՍ-1 | Ոչ քննական առարկա<br>Բաղադրիչ 1՝ 30 % (Միջանկյալ ստուգում 1 - գրավոր աշխատանք. վարժություններ, առաջադրանքներ՝ ըստ ուսումնասիրված թեմաների)<br>Բաղադրիչ 2՝ 30 % (Միջանկյալ ստուգում 2 - գրավոր աշխատանք. վարժություններ, առաջադրանքներ՝ ըստ ուսումնասիրված թեմաների)<br>Բաղադրիչ 3՝ 10 % (Հաճախում)<br>Բաղադրիչ 4՝ 30 % (Ընթացիկ ստուգում՝ ակտիվություն Google Classroom էլեկտրոնային հարթակում և գործնական դասաժամերին) |
| 3. | Քոչարյան Հրանտ<br><br>*Սեմինարավար՝ Հովհաննիսյան Հասմիկ* | Ընտր/դաս (Տրամաբանություն) | ԱԲ-4<br>ՊԻ-4 | Ոչ քննական առարկա<br>Բաղադրիչ 1՝ 30 % (Միջանկյալ ստուգում 1 - գրավոր աշխատանք. վարժություններ, առաջադրանքներ՝ ըստ ուսումնասիրված թեմաների)<br>Բաղադրիչ 2՝ 30 % (Միջանկյալ ստուգում 2 - գրավոր աշխատանք. վարժություններ, առաջադրանքներ՝ ըստ ուսումնասիրված թեմաների)<br>Բաղադրիչ 3՝ 10 % (Հաճախում)<br>Բաղադրիչ 4՝ 30 % (Ընթացիկ ստուգում՝ ակտիվություն Google Classroom էլեկտրոնային հարթակում և գործնական դասաժամերին) |
| **Շահբազյան Մարինե** | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Շահբազյան Մարինե<br><br>*Սեմինարավար՝ Գևորգյան Աշոտ* | **Փիլիսոփայություն** | ԱԲ 2<br>ԳԿ-5 | **Քննական առարկա**<br>Բաղադրիչ 1 – 30 % (միջանկյալ ստու-գում 2 - թեստ)<br>Բաղադրիչ 2 – 30 % (միջանկյալ ստու-գում 1 - թեստ)<br>Բաղադրիչ 3 – 10 % (հաճախում)<br>Բաղադրիչ 4 – 10 % (ընթացիկ ստուգում - ակտիվություն քննարկումների և գործնական պարապմունքների ժամանակ)<br>Բաղադրիչ 5 – 20 % (ամփոփիչ ստուգում - բանավոր քննություն) |
| 2. | Շահբազյան Մարինե | **Փիլիսոփայություն** | Ա.Բ 2<br>ԿՀՍ-6 հոգեբանություն | **Քննական առարկա**<br>Բաղադրիչ 1 – 30 % (միջանկյալ ստու-գում 2 - թեստ)<br>Բաղադրիչ 2 – 30 % (միջանկյալ ստու-գում 1 - թեստ)<br>Բաղադրիչ 3 – 10 % (հաճախում)<br>Բաղադրիչ 4 – 10 % (ընթացիկ ստուգում - ակտիվություն քննարկումների և գործնական պարապմունքների ժամանակ)<br>Բաղադրիչ 5 – 20 % (ամփոփիչ ստուգում - բանավոր քննություն) |
| 3. | Շահբազյան Մարինե<br><br>*Սեմինարավար՝ Ջիջյան Ռոբերտ, Ստեփանյան Անդրանիկ* | **Փիլիսոփայություն** | Ա.Բ 2<br>Կ-7 | **Քննական առարկա**<br>Բաղադրիչ 1 – 30 % (միջանկյալ ստու-գում 2 - թեստ)<br>Բաղադրիչ 2 – 30 % (միջանկյալ ստու-գում 1 - թեստ)<br>Բաղադրիչ 3 – 10 % (հաճախում)<br>Բաղադրիչ 4 – 10 % (ընթացիկ ստուգում - ակտիվություն քննարկումների և գործնական պարապմունքների ժամանակ)<br>Բաղադրիչ 5 – 20 % (ամփոփիչ ստուգում - բանավոր քննություն) |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4. | Շահբազյան Մարինե<br><br>*Սեմինարավար՝ Գևորգյան Աշոտ* | **Փիլիսոփայություն** | ԱԲ-3<br>ԳԿ-5 | **Քննական առարկա**<br>Բաղադրիչ 1 – 30 % (միջանկյալ ստուգում 2 - թեստ)<br>Բաղադրիչ 2 – 30 % (միջանկյալ ստուգում 1 - թեստ)<br>Բաղադրիչ 3 – 10 % (hաճախում)<br>Բաղադրիչ 4 – 10 % (ընթացիկ ստուգում - ակտիվություն քննարկումների և գործնական պարապմունքների ժամանակ)<br>Բաղադրիչ 5 – 20 % (ամփոփիչ ստուգում - բանավոր քննություն) |
| 5. | ՝<br>*Հովհաննիսյան Հասմիկ* | **Տրամաբանություն** | ԱԲ-4 | Ոչ քննական առարկա<br>Բաղադրիչ 1՝ 30 % (Միջանկյալ ստուգում 1 - վերլուծական աշխատանք)<br>Բաղադրիչ 2՝ 30 % (Միջանկյալ ստուգում 2 - գրավոր աշխատանք)<br>Բաղադրիչ 3՝ 5 % (Հաճախում)<br>Բաղադրիչ 4՝ 35 % (Ընթացիկ ստուգում - խմբային աշխատանք՝ բանավոր ներկայացմամբ (30 %) + Էլեկտրոնային ակտիվություն (5 %) |
| | | **Պետրոսյան Նելլի** | | |
| 6. | **Պետրոսյան Նելլի** | **Մշակութային մարդաբանություն** | Ա.Բ 1<br>ԳԿ-5 | **Քննական առարկա**<br>Բաղադրիչ 1 - % (Միջանկյալ ստուգում 1 - թեստ)<br>Բաղադրիչ 2 - % (Հաճախում)<br>Բաղադրիչ 3 - % (Ընթացիկ ստուգում՝ ռեֆերատ)<br>Բաղադրիչ 4 - % (Ամփոփիչ ստուգում) |
| 7. | | Կրոնի տեսություն և պատմություն | Ա.Բ 3<br>ՊԻ-4<br>Հասարակագիտ. | Ոչ քննական առարկա<br>Բաղադրիչ 1 – 30 % (Միջանկյալ 1՝ թեստ)<br>Բաղադրիչ 2 – 30 % (Միջանկյալ 2՝ թեստ)<br>Բաղադրիչ 3 – 10 % (Հաճախում)<br>Բաղադրիչ 4 – 30 % ( Ընթացիկ ստուգում՝ լսարանային ակտիվություն ) |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 8. | | Ընտր/դաս (Կրոնի տեսություն և պատմություն) | ՀԿ-9 ԱԲ-4 | Ոչ քննական առարկա<br>Բաղադրիչ 1 – 30 % (Միջանկյալ 1՝ թեստ)<br>Բաղադրիչ 2 – 30 % (Միջանկյալ 2՝ թեստ)<br>Բաղադրիչ 3 – 10 % (Հաճախում)<br>Բաղադրիչ 4 – 30 % (Ընթացիկ ստուգում՝ վերլուծական աշխատանք) |
| 9. | | Ընտր/դաս (Մշակույթի փիլիսոփայություն) | ՕԼ-10 օտար ԱԲ-4 | Ոչ քննական առարկա<br>Բաղադրիչ 1 - 30% (Միջանկյալ 1 – գրավոր աշխատանք՝ թեստ)<br>Բաղադրիչ 2 - 30% (Միջանկյալ 2 – էսսե)<br>Բաղադրիչ 3 - 10% (Հաճախում)<br>Բաղադրիչ 4 - 30% (Ընթացիկ ստուգում՝ լսարանային ակտիվություն ) |
| 10. | | Ընտր/դաս (Մշակույթի փիլիսոփայություն) | ՕԼ-10 Ռուս. ԱԲ-4 | Ոչ քննական առարկա<br>Բաղադրիչ 1 - 30% (Միջանկյալ 1 – գրավոր աշխատանք՝ թեստ)<br>Բաղադրիչ 2 - 30% (Միջանկյալ 2 – էսսե)<br>Բաղադրիչ 3 - 10% (Հաճախում)<br>Բաղադրիչ 4 - 30% (Ընթացիկ ստուգում՝ լսարանային ակտիվություն ) |

**ԼՍԵՑԻՆ՝** 2019-2020 ուս. տարվա միջանկյալ ստուգումների և քննական հարցաշարերի հաստատում :

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝** պրոֆեսոր Ռ.Ջիջյանը, դոցենտներ Ս.Դավթյանը, Ա.Ստեփանյանը, Ա.Գևորգյանը, Հովհ.Հովհաննիսյանը, Դ.Մոսինյանը, ասիստենտ Հ.Քոչարյանը և դասախոսներ Մ.Շահբազյանը, Ն.Պետրոսյանը, ովքեր ներկայացրին իրենց կողմից դասավանդվող դասընթացների միջանկյալ ստուգումների և քննական հարցաշարերը և նշեցին բոլոր այն փոփոխությունները,որոնք իրենք առաջարկում են իրականացնել դրանցում:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** ամբիոնի վարիչ Հ.Հովհաննիսյանը, պրոֆեսոր Ռ.Ջիջյանը, դոցենտներ Ս.Դավթյանը, Ա.Ստեփանյանը, Ա.Գևորգյանը, Հովհ.Հովհաննիսյանը, Դ.Մոսինյանը, ասիստենտ Հ.Քոչարյանը և դասախոսներ Մ.Շահբազյանը, Ն.Պետրոսյանը, ովքեր հայտնեցին որոշ նկատառումներ քննարկվող հարցաշարերի շուրջ:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հաստատել

- *Փիլիսոփայության ներածություն, Մշակութային մարդաբանություն, Փիլիսոփայություն, Բիոէթիկայի հիմունքներ, Պատմության փիլիսոփայություն* ամփոփիչ քննությամբ ավարտվող դասընթացների միջանկյալ ստուգումների և քննական հարցաշարերը, ինչպես նաև *Էթիկա և էթիկետ, Տրամաբանություն, Ընտր/դաս (Տրամաբանություն),*

*Կրոնի տեսություն և պատմություն, Ընտր/դաս (Գիտական աշխատանքի տեխնոլոգիա), Ընտր/դաս (Մշակույթի փիլիսոփայություն), Ընտր/դաս (Փաստարկում և ճարտասանություն), Ընտր/դաս (Գլոբալիզացիայի հիմնախնդիրներ), ընտր/դաս (Կրոնի տեսություն և պատմություն)* ոչ քննական դասընթացների միջանկյալ ստուգումների փոփոխված հարցաշարերը:

- Միջանկյալ ստուգումների և քննական հարցաշարերը ուղարկել ամբիոնի էլ. փոստին:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:

Ամբիոնի վարիչ՝ Հ.Հովհաննիսյան

Նիստի քարտուղար՝ Գ.Աբգարյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

**ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY
AFTER KHACHATUR ABOVYAN
DEPARTMENT OF PHILOSOPHY AND LOGIC
NAMED AFTER ACADEMICIAN GEORG BRUTIAN**



Երևան՝ 10, Տիգրան Մեծի 17
Հեռ.՝ 597 065
Էլ.փոստ ՝chairofphilosophy@gmail.com;
philos-logic25@aspu.am
Բլոգ՝ chairoflogicphiloscult.wordpress.com

Yerevan: 10, Tigran Mets ave. 17
Phone: 597 065
E. mail: chairofphilosophy@gmail.com;
philos-logic25@aspu.am
Blog: chairoflogicphiloscult.wordpress.com

05.09.2019 թ.

## ՆԻՍՏ ԹԻՎ 2

Նիստին մասնակցում էին Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, պրոֆեսոր Ռոբերտ Ջիջյանը,դոցենտներ Սուսաննա Դավթյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Անդրանիկ Ստեփանյանը, Աշոտ Գևորգյանը, Դավիթ Մոսինյանը, ասիստենտ Հրանտ Քոչարյանը, դասախոս Մարինե Շահբազյանը, ավագ մասնագետ Գայանե Աբգարյանը:

**ՕՐԱԿԱՐԳ՝** 1 Ամբիոնի Ֆիզ. արձակուրդում գտնվող ավագ մասնագետ Սաթենիկ Կուզանյանի դիմումը՝ ՀՊՄՀ արհմիության կողմից երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցություն ստանալու առթիվ:

2 Google Classroom հարթակում աշխատանքների կազմակերպման շուրջ հարցը:

**ԼՍԵՑԻՆ՝** Օրակարգի առաջին հարցը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝** Հասմիկ Հովհաննիսյանը, Ռոբերտ Ջիջյանը և ներկայացնելով Սաթենիկ Կուզանյանի երիտասարդ ընտանիքին աջակցելու կարևորությունը, առաջարկեցին հավանություն տալ նրա դիմումին և միջնորդել համալսարանի արհմիությանը՝ բավարելու դիմումում ներկայացված խնդրանքը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Դիմել ՀՊՄՀ արհմիությանը՝ առաջարկելով հավանություն տալ Սաթենիկ Կուզանյանի դիմումին:

**ԼՍԵՑԻՆ՝** Google Classroom հարթակում աշխատանքների կազմակերպման շուրջ հարցը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝** ամբիոնի վարիչ Հ.Հովհաննիսյանը նշեց, որ նախորդ նիստի (27.08.2019 թ.) ժամանակ քննարկված, վերամշակված և հաստատված առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումները Google Classroom-ի ամբիոնի պատասխանատու Գայանե Աբգարյանն արդեն տեղադրել է Google Classroom-ի հարթակում: Այժմ հարկ է Google Classroomի հարթակում տեղադրել դասընթացի համար նախատեսված բոլոր նյութերը՝ ըստ թեմաների դասընթացների Classwork տիրույթում, ինչպես նաև՝ միջանկյալ ստուգումների և քննական հարցաշարերը, գործնական պարապմունքների համար նախատեսված նյութերը, էլեկտրոնային գրականությունը և այլ անհրաժեշտ նյութերը, որոնք դասախոսի հայեցողությամբ կարևոր են տվյալ դասընթացի համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Google Classroom հարթակում կիսամյակի սկզբին տեղադրել բոլոր ուսումնական նյութերը:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:

Ամբիոնի վարիչ՝ Հ.Հովհաննիսյան

Նիստի քարտուղար՝ Գ.Աբգարյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

**ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY**
**AFTER KHACHATUR ABOVYAN**
**DEPARTMENT OF PHILOSOPHY AND LOGIC**
**NAMED AFTER ACADEMICIAN GEORG BRUTIAN**

Երևան՝ 10, Տիգրան Մեծի 17
Հեռ.՝ 597 065
Էլ.փոստ ՝chairofphilosophy@gmail.com;
philos-logic25@aspu.am
Բլոգ՝ chairoflogicphiloscult.wordpress.com

Yerevan: 10, Tigran Mets ave. 17
Phone: 597 065
E. mail: chairofphilosophy@gmail.com;
philos-logic25@aspu.am
Blog: chairoflogicphiloscult.wordpress.com

27.09.2019 թ.

## ՆԻՍՏ ԹԻՎ 3

Նիստին մասնակցում էին Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, պրոֆեսոր Ռոբերտ Ջիջյանը, դոցենտներ Հովհաննես Հովհաննիսյանը, Անդրանիկ Ստեփանյանը, Աշոտ Գևորգյանը, Սուսաննա Դավթյանը, Դավիթ Մոսինյանը, ասիստենտ Հրանտ Քոչարյանը, դասախոսներ Մարինե Շահբազյանը, Նելլի Պետրոսյանը, ավագ մասնագետ Գայանե Աբգարյանը:

**ՕՐԱԿԱՐԳ՝**

1. Բարձրագույն կրթության և գիտության մասին ՀՀ օրենքի նախագիծը:
2. Ավարտական թեզերի թեմաների առաջադրում և քննարկում:
3. Կուրսային աշխատանքների թեմաների առաջադրում և քննարկում:
4. ՊԴԱ պլանների ներկայացում, քննարկում և հաստատում:
5. 2019 թ. ՊԴԱ գիտական գործունեության հաշվետվությունների լսում:
6. Google Classroom հարթակում տեղադրվող նյութերի և դրանում աշխատանքների կազմակերպման և իրականացման մասին:
7. «Փիլիսոփայություն» և «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» առարկաների որակավորման քննության հանձնաժողովի կազմի առաջադրում, քննական հարցաշարերի և տոմսերի հաստատում:
8. Google Classroom հարթակում հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերում իրականացվող դասընթացների էլեկտրոնային էջերի աշխատանքի կազմակերպման, տեղադրվող ուսումնական նյութերի քննարկման և հաստատման հարցը:

**ԼՍԵՑԻՆ՝** «Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության մասին օրենքի նախագծի» աշխատանքային տարբերակի շուրջ ամբիոնի անդամների դիտարկումները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Հասմիկ Հովհաննիսյանը, Ռոբերտ Ջիջյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Անդրանիկ Ստեփանյանը, Աշոտ Գևորգյանը, Սուսաննա Դավթյանը, դասախոսներ Նելլի Պետրոսյանը, Մարինե Շահբազյանը:

Խնդրո առարկա հարցի շուրջ դիտարկված տեսակետները կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գլուխ 1, հոդված 3, կետ 5.

   **համալսարան**՝ բուհ, որի գործունեությունը նպատակաուղղված է առնվազն երեք տարբեր ակադեմիական բնագավառներով բարձրագույն կրթության երեք մակարդակներում ուսումնառության կազմակերպմանը և գիտահետազոտական գործունեության իրականացմանը,

   Դիտողություն՝

   Սահմանումը լայն է: Այլապես «համալսարան» հասկացության մեջ կմտնեն նման ծրագրեր իրականացնող բարձրագույն դպրոցները, ակադեմիաները և այլն:

2. Գլուխ 4 հոդված 27, կետ 4.

   Կառավարման խորհրդի նախագահ կարող է լինել միայն բուհի հետ համագործակցող կազմակերպությունից կամ լիազոր մարմնի կողմից նշանակված անդամը:

   Դիտողություն՝

   Սահմանափակում է ակադեմիական կազմի իրավունքները: Պետք է դա էլ ավելացնել:

3. Թեև Գլուխ 4-ի 7-րդ՝ «Կառավարման խորհրդի անդամ չի կարող լինել՝ որևէ

   3.կուսակցության ղեկավար մարմնի անդամը,

   4.քաղաքական կամ հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձը,

   կետերը նպաստում են բուհերի ապաքաղաքականացմանը, սակայն Հոդված 31, կետ 2-ում ասվում է՝ «բուհում դասավանդման կամ գիտական կամ վարչական աշխատանքի առնվազն 5 տարվա ստաժ, գիտական աստիճան և բարձրագույն կրթության կամ գիտության ոլորտի առնվազն 5 տարվա փորձ»:

   Դիտողություն՝

   Պայմանները շատ մեղմ են, չեն նպաստում բուհի ղեկավարումը ավելի ներկայանալի և փորձառու կադրերին վստահելու քաղաքականությանը: Ճիշտ կլիներ վերաձևակերպել՝ սահմանելով հետևյալ չափորոշիչները. «...բուհում դասավանդման կամ գիտական աշխատանքի առնվազն 15 տարվա և բուհական համա-

կարգում վարչական աշխատանքի առնվազն 5 տարվա ստաժ»: Իսկ «գիտական աստիճան և բարձրագույն կրթության կամ գիտության ոլորտի առնվազն 5 տարվա փորձ» ձևակերպումը պետք է հանել: դա նպաստելու է, որ քաղաքական և վարչական պաշտոններ զբաղեցնողները սահուն անցնեն բուհերի ռեկտորների պաշտոններին:

4. Հոդված 6, կետ 7

   Բուհը մշակում և հաստատում է աշխատողների վճարման կարգը:

   Դիտողություն՝

   Ստացվում է, որ պետությունը լվանում է ձեռքերը: Հարկավոր է ներդնել որևէ մեխանիզմ, որը կսահմանի նվազագույն շեմ դասախոսի աշխատավարձի առումով:

5. Հոդված 36.

   Արգելվում է ... Ջավախքի, Արցախի ... ուսանողների համար ավելի բարձր վարձ սահմանել (բոլոր հայազգի ուսանողների համար պետք է արգելվի ավելի բարձր վարձ սահմանել: Ավելին, այն ոչ հայազգի ուսանողների համար, որոնք պատրաստ են հայերեն լեզվով դասախոսություններ լսել, նրանց համար ևս կարելի է արգելել բարձր վարձ սահմանել):

6. Ֆունդամենտալ և հումանիտար գիտությունների առումով պետությունը պետք է պատասխանատվություն ու պարտավորություն ունենա, և քվոտաներ սահմանի, որպեսզի որև ԲՈՒՀ չկարողանա կամայաբար պակասեցնել կամ ընդհանրապես հանել այս գիտական դիսցիպլիններին հատկացվող ժամերը:

   Բարձրագույն կրթության մասին օրենքում պետք է հստակ սահմանել ակադեմիական դասաժամի տևողության և դասախոսի ազատության մասին կետերը: Դասախոսը պետք է օրենքով պաշտպանված լինի ԲՈՒՀԻ կողմից դասերից, խորհրդատվություններից, ստուգարքներից ու քննություններից դուրս որևէ կերպ իրեն ԲՈՒՀԻ տարածքում պահելու պարտադրանքից:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Դիտարկված նկատառումները գրավոր ներկայացնել ՀՊՄՀ պրոռեկտոր Միհեր Մելիք-Բախշյանին:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:

**ԼՍԵՑԻՆ՝** Ավարտական թեզերի թեմանների առաջադրման և քննարկման հարցը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝** ամբիոնի վարիչ Հ.Հովհաննիսյանը և նշեց, որ ամբիոնին առաջին անգամ հնարավորություն է ընձեռնվել առաջարկել ավարտական թեզերի թեմաներ Պատմություն և իրավագիտություն ֆակուլտետի «Հասարակագիտություն» մասնագիտությամբ սովորող ուսանողների համար: Այնուհետև նա նշեց, որ 4 ուսանող ցանկություն են հայտնել գրել իրենց ավարտական աշխատանքները Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնում և հաշվի առնելով նշված ուսանողների նախասիրությունները գիտական թեմաների շուրջ և իրենց նախընտրությունը աշխատելու ամբիոնի կոնկրետ դասախոսի հետ (դա հնարավոր էր, քանի որ Ամբիոնի բոլոր

դասախոսները շփվում են Հասարակագիտություն մասնագիտությամբ ուսանողների հետ ինչպես իրենց կողմից դասավանդվող առարկաների, այնպես էլ՝ «Երիտասարդ փիլիսոփայի խմբակի» շրջանակներում), առաջադրվել են ավարտական աշխատանքների հետևյալ թեմաները և հետևյալ ղեկավարները։

1. **Քրիստինե Ավետիսյան**

   Թեմա՝ «Էկզիստենցիալ փիլիսոփայության հիմնական կատեգորիաները XX դարի հայ գրականության մեջ (Աղասի Այվազյան, Հրաչյա Մաթևոսյան). գիտագործնական վերլուծություն».

   Գիտական ղեկավար՝ Համիկ Հովհաննիսյան

2. **Սարգսյան Մեյրան**

   Թեմա՝ «Բարու և չարի հիմնախնդիրը Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» և Կոնֆուցիոսի «Զրույցներ» աշխատություններում (համեմատական վերլուծություն)».

   Գիտական ղեկավար՝ Աշոտ Գևորգյան

3. **Դավթյան Էլեն**

   Թեմա՝ «Մշակույթի դինամիկան, ձևերը և մեխանիզմները ժամանակակից հայ իրականության մեջ»

   Գիտական ղեկավար՝ Անդրանիկ Ստեփանյան

4. **Խաչատուրովա Մարիամ**

   Թեմա՝ «Ազգ և ժողովուրդ։ Եվրոպական արժեքները ժամանակակից Հայաստանի մշակույթի համակարգում»։

   Գիտական ղեկավար՝ Հովհաննես Հովհաննիսյան։

ԵԼՈւՅԹ ՈՒՆԵՑԱՎ պրոֆեսոր Ջիջյանը և առաջարկեց հաստատել առաջադրված թեմաները։

ԼՍԵՑԻՆ՝ Կուրսային աշխատանքների թեմանների առաջադրման և քննարկման հարցը։

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ ամբիոնի վարիչ Հ.Հովհաննիսյանը և հիշեցրեց, որ ամբիոնում բազմիցս քննարկվել է կուրսային աշխատանքների թեմաների առաջադրման հարցը և ամբիոնի գրեթե բոլոր դասախոսները՝ Ռ.Ջիջյանը, Հովհ. Հովհաննիսյանը, Ա.Ստեփանյանը, Ա.Գևորգյանը, Դ.Մոսիյանը, առաջադրել են իրենց առաջարկները՝ գրավոր կերպով։ Ներկայացված բոլոր թեմաներն էլ հետաքրքիր են, իրատապ, բայց ցավոք, Ամբիոնին տրվել է ընդամենը 2 ուսանող ղեկավարելու հնարավորություն, թեև բավականին մեծ թվով ուսանողներ ցանկություն են հայտնել իրենց աշխատանքները պատրաստել Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնում։ Ուսանողներին ներկայացված թեմաներից ընտրվել են հետևյալները՝

1. **Տաթև Արշակյան**

   «Երկխոսություն, փաստարկում և կրթություն. գիտագործնական վերլուծություն».

   Գիտական ղեկավար՝ Աշոտ Գևորգյան

2. Էդուարդ Սարյան

«Դավիթ Անհաղթի «կատարյալ փիլիսոփան» XXI դարում»

Գիտական ղեկավար՝ Հասմիկ Հովհաննիսյան

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հաստատել ներկայացված ավարտական և կուրսային աշխատանքների թեմաները:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:

**ԼՍԵՑԻՆ՝** 2019-2020 ուս. տարվա ՊԴԱ պլանների հաստատման հարցը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝** ամբիոնի վարիչ Հ.Հովհաննիսյանը առաջարկեց բոլոր դասախոսներին ներկայացնել իրենց կազմած ՊԴԱ պլանները: Արտահայտվեցին պրոֆեսոր Ռ.Ջիջյանը, դոցենտներ Ս.Դավթյանը, Ա.Ստեփանյանը, Ա.Գևորգյանը, Հովհ.Հովհաննիսյանը, Դ.Մոսինյանը, ասիստենտ Հ.Քոչարյանը, դասախոսներ Մ.Շահբազյանը, Ն.Պետրոսյանը և ներկայացրին իրենց 2019-2020 ուս. տարվա ՊԴԱ անհատական աշխատանքների պլանները և դրանց թղթային ու էլեկտրոնային տարբերակները ստորագրված հանձնեցին ամբիոնում պահպանման համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** հաստատել 2019-2020 ուս. տարվա ՊԴԱ պլանները:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:

**ԼՍԵՑԻՆ՝** Ամբիոնի 2019 թ. գիտական գործունեության տարեկան հաշվետվության հարցը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝** Ամբիոնի վարիչ Հ.Հովհաննիսյանը, ով ամբիոնի անդամներին տեղեկացրեց, որ 2019 թ. գիտական հաշվետվությունը այս անգամ կազմված է նոր ձևաչափով, որում ընդգրկված են նաև ամբիոնի դասախոսների կողմից արդեն իսկ տրամադրված հրատարակությունների մասին տեղեկույթը: Նա նշեց, որ բավական լուրջ և ժամանակատար աշխատանքն է իրականացվել իր և ամբիոնի ավագ մասնագետի կողմից, քանզի ձևաչափը պահանջում է ամբիոնի տարեկան բազմաբնույթ աշխատանքի մասին մանրամասն տեղեկույթի և վերլուծության տրամադրում: Հ.Հովհաննիսյանը նշեց, որ փաստաթղթի նախագծային ավարտուն տարբերակը էլեկտրոնային փոստով ուղարկվել է ամբիոն:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** պրոֆեսոր Ռ.Ջիջյանը, դոցենտներ Ա.Գևորգյանը, Հովհ.Հովհաննիսյանը, Դ.Մոսինյանը, ասիստենտ Հ.Քոչարյանը, դասախոսներ Մ.Շահբազյանը, Ն.Պետրոսյանը, ովքեր նկատեցին, որ իսկապես բավական ծավալուն փաստաթուղթ է ներկայացված քննարկման և հաստատման համար, որում լիովին արտացոլված են ամբիոնի 2019 թվականին ծավալած գիտահետազոտական գործունեությունը և առաջարկեցին հաստատել ամբիոնի 2019 թ. գիտական գործունեության տարեկան հաշվետվությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** հաստատել ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի անվան փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի 2019 թ. գիտական գործունեության տարեկան հաշվետվությունը և ներկայացնել այն ՀՊՄՀ գիտական կենտրոնի տնօրեն Կամո Վարդանյանին՝ էլեկտրոնային փոստով:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:

**ԼՍԵՑԻՆ՝** Google Classroom հարթակում աշխատանքների կազմակերպման շուրջ:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝** ամբիոնի վարիչ Հ.Հովհաննիսյանը նշեց, որ նախորդ նիստի (27.08.2019 թ.) ժամանակ քննարկված, վերամշակված և հաստատված առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումները Google Classroom-ի ամբիոնի պատասխանատու Գայանե Աբգարյանն արդեն տեղադրել է Google Classroom-ի հարթակում: Այժմ հարկ է Google Classroom-ի հարթակում տեղադրել դասընթացի համար նախատեսված բոլոր նյութերը՝ ըստ թեմաների դասընթացների Classwork տիրույթում, ինչպես նաև՝ միջանկյալ ստուգումների և քննական հարցաշարերը, գործնական պարապմունքների համար նախատեսված նյութերը, էլեկտրոնային գրականությունը և այլ անհրաժեշտ նյութերը, որոնք դասախոսի հայեցողությամբ կարևոր են տվյալ դասընթացի համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Google Classroom հարթակում կիսամյակի սկզբին տեղադրել դասավանդվող առարկաների բոլոր ուսումնական նյութերը:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:

**ԼՍԵՑԻՆ՝** Հաստատել «Փիլիսոփայություն» և «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» առարկաների քննության հարցաշարերը և տոմսերը, հանձնաժողովի կազմը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝** Ամբիոնի վարիչ Հ.Հովհաննիսյանը, ով տեղեկացրեց, որ ասպիրանտների և հայցորդների Փիլիսոփայության որակավորման քննության համար կազմվել է երկու հարցաշար՝ հասարակագետների և բնագետների համար՝ համապատասխանաբար 60 հարցերից բաղկացած, դրանց հիման վրա էլ կազմվել են որակավորման քննության տոմսերը,որոնցից յուրաքանչյուրը ներառում է 3-ական հարց(հարցաշարերը կցվում են) :

Պրոֆեսոր Ջիջյանը առաջարկեց «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» առարկայի համար կատարել որոշակի փոփոխություններ հարցաշարի և տոմսերի հետ կապված, այդ իսկ պատճառով ամբիոնի վարիչ Հ.Հովհաննիսյանն առաջարկեց, դասընթացն իրականացնող պրոֆեսոր Օհանյանին, վերամշակել հարցաշարն ըստ իր կողմից մատուցող նյութի:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

1. Հաստատել *Փիլիսոփայության* որակավորման քննության հարցաշարերը և քննական տոմսերը հասարակագետների և բնագետների համար:
2. վերամշակումից հետո հաստատել *Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն* դասընթացների որակավորման քննությունների հարցաշարերը և քննական տոմսերը:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:

**ԼՍԵՑԻՆ՝** Google Classroom հարթակում հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերում իրականացվող դասընթացների էլեկտրոնային էջերի աշխատանքի կազմակերպման, տեղադրվող ուսումնական նյութերի քննարկման և հաստաման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ Google Glassroom հարթակի ամբիոնական պատասխանատու Գ.Աբգարյանը հայտնեց, որ ստեղծվել են 2019-2020 ուս. տարվա հեռակա ուսուցման դասընթացների էջերը, կցվել են համապատասխան դասախոսները, տեղադրվել են առարկայական նկարագրերը և հիշեցրեց, որ դասախոսները պետք է տեղադրեն նշված առարկաների իրականացմանն առնչվող բոլոր անհրաժեշտ նյութերը:

Դասախոսները համառոտ կերպով ներկայացրին իրենց կողմից իրականացվող դասընթացների ուսումնական նյութերը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել 2019-2020 ուս. տարվա հեռակա ուսուցման համակարգի դասավանդվող դասընթացների ուսումնական նյութերը հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի դասընթացների էլեկտրոնային Google Classroom հարթակում տեղադրվող ուսումնական նյութերը:
2. Հանձնարարել 2019-2020 ուս. տարվա հեռակա ուսուցման համակարգում դասավանդող դասախոսներին 5 աշխատանքային օրվա ընթացքում Google Glassroom հարթակում տեղադրել դասընթացների իրականացմանն առնչվող բոլոր անհրաժեշտ նյութերը:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:

Ամբիոնի վարիչ՝ Հ.Հովհաննիսյան

Նիստի քարտուղար՝ Գ.Աբգարյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

**ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY
AFTER KHACHATUR ABOVYAN
DEPARTMENT OF PHILOSOPHY AND LOGIC
NAMED AFTER ACADEMICIAN GEORG BRUTIAN**



Երևան՝ 10, Տիգրան Մեծի 17
Հեռ.՝ 597 065
Էլ.փոստ ՝ chairofphilosophy@gmail.com; philos-logic25@aspu.am
Բլոգ՝ chairoflogicphiloscult.wordpress.com

Yerevan: 10, Tigran Mets ave. 17
Phone: 597 065
E. mail: chairofphilosophy@gmail.com; philos-logic25@aspu.am
Blog: chairoflogicphiloscult.wordpress.com

21.11.2019 թ.

## ՆԻՍՏ ԹԻՎ 4

Նիստին մասնակցում էին Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, պրոֆեսոր Ռոբերտ Ջիջյանը, դոցենտներ Հովհաննես Հովհաննիսյանը, Անդրանիկ Ստեփանյանը, Աշոտ Գևորգյանը, Սուսաննա Դավթյանը, Դավիթ Մոսինյանը, ասիստենտ Հրանտ Քոչարյանը, դասախոսներ Մարինե Շահբազյանը, Նելլի Պետրոսյանը, ավագ մասնագետ Գայանե Աբգարյանը:

### ՕՐԱԿԱՐԳ՝

9. Ամբիոնի հայցորդ Սաթենիկ Կուզանյանի 2019 թ. ատեստավորման հարցը. Հաշվետվության լսում:
10. Կարինե Օհանյանի դոկտորական ատենախոսության քննարկումը (նախապաշտպանությունը):

**ԼՍԵՑԻՆ՝** Ամբիոնի հայցորդ Սաթենիկ Կուզանյանի 2019 թ. հաշվետվությունը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ** Հ. Հովհաննիսյանը, ով ամբիոնի անդամներին ներկայացրեց Սաթենիկ Կուզանյանի աշխատանքի ընթացքը, ապա խոսքը փոխանցեց Սաթենիկ Կուզանյանին, ով ներկայացրեց հաշվետվությունը: Սաթենիկ Կուզանյանը նշեց, որ կատարել է *Կրթության փիլիսոփայական-մեթոդաբանական արդի հիմնախնդիրները* թեմայի (հաստատված ՀՊՄՀ գիտական խորհրդի 2016 թ. հունիսի 6-ի նիստով, գիտական ղեկավար՝ փ.գ.դ., դոցենտ Հասմիկ Հովհաննիս-

յան) շուրջ գրականության հետազոտություն, մասնավորապես՝ բրազիլացի փիլիսոփա, կրթության հարցերի մասնագետ Պաոլո Ֆրեյրեի կրթության փիլիսոփայության շուրջ աշխատությունների ուսումնասիրություն, դրանց համեմատական դիտարկում և վերլուծություն, զուգահեռների անցկացում ժամանակակից հայ հասարակության կրթության հիմնախնդիրների, կրթական պահանջների, նոր միտումների և հասարակության ակնկալիքների հետ: Նա ավելացրեց, որ Պաոլո Ֆրեյրեի կրթության փիլիսոփայության շուրջ աշխատությունների և այլ նյութերի հավաքագրման ու մշակման աշխատանքների ծավալուն լինելու պատճառով 2019 թվականի ընթացքում հրատարակություն չեմ ունեցել, սակայն 2020 թ.-ին նախատեսում եմ հրատարակել երկու գիտական հոդված և ավարտուն տեսքի բերել աշխատանքը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** դոցենտներ Ա.Գևորգյանը, Հովհ.Հովհաննիսյանը, Դ.Մոսինյանը, ասիստենտ Հ.Քոչարյանը, ովքեր նկատեցին, որ իսկապես բնականոն հունով ընթանում են Սաթենիկ Կուզանյանի հետազոտական աշխատանքները և նշեցին, որ ակնկալում են զերազանց արդյունք:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** ընդունել ի գիտություն ներկայացված հաշվետվությունը:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:

**ԼՍԵՑԻՆ՝** Կարինե Օհանյանի «Կառավարչական մտքի ծագումնաբանությունը ռուսական սոցիալական փիլիսոփայության մեջ անձի տեսական-մեթոդաբանական վերլուծության համատեքստում» («ГЕНЕЗИС УПРАВЛЕНЧЕСКОЙ МЫСЛИ В КОНТЕКСТЕ ТЕОРЕТИКО-МЕТОДОЛОГИЧЕСКОГО АНАЛИЗА ЛИЧНОСТИ В РОССИЙСКОЙ СОЦИАЛЬНОЙ ФИЛОСОФИИ») դոկտորական ատենախոսության քննարկումը (նախապաշտպանությունը):

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝** Ամբիոնի վարիչ Հ.Հովհաննիսյանը, ով ներկայացրեց Կարինե Քաջիկի Օհանյանին և նշեց, որ Կ.Օհանյանի գիտական գործունեությանը շատերին քաջածանոթ է: Այնուհետև նա խոսքը տրամադրեց Կ.Օհանյանին իր «Կառավարչական մտքի ծագումնաբանությունը ռուսական սոցիալական փիլիսոփայության մեջ անձի տեսական-մեթոդաբանական վերլուծության համատեքստում» («ГЕНЕЗИС УПРАВЛЕНЧЕСКОЙ МЫСЛИ В КОНТЕКСТЕ ТЕОРЕТИКО-МЕТОДОЛОГИЧЕСКОГО АНАЛИЗА ЛИЧНОСТИ В

РОССИЙСКОЙ СОЦИАЛЬНОЙ ФИЛОСОФИИ») աշխատանքը ներկայացնելու համար:

Կ. Օհանյանի ելույթի ռուսերեն տեքստը և սահիկահանդեսը կցվում են սույն արձանագրությանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ք.Օհանյանը, Ռ.Ջիջյանը,Ս. Դավթյանը, Ա.Գևորգյանը և Ա.Ստեփանյանը: Պրոֆեսոր Ռ.Ջիջյանը նշեց, որ ատենախոսական աշխատանքը շատ դրական տպավորություն է թողնում, հատկապես հետազոտության նշանակալի գիտական նորույթը (էջ 15) և պաշտպանության ներկայացված գիտական արդյունքները (էջ 19): Նա շնորհավորեց ատենախոսին առաջին անգամ ղեկավարի անձի ինտեգրալ հայեցակարգի մշակման համար: Նա նշեց նաևոր ուրախալի է նաև, որ Կարինա Օհանյանը կյանք է տվել Ա.Ի. Ստրոնինի սոցիալ-փիլիսոփայական ժառանգությանը:

Ա.Ստեփանյանը նշեց որ Օհանյան Կարինա Քաջիկի «Ռուսական սոցիալական փիլիսոփայությունում անձի տեսամեթոդաբանական վերլուծությունը. Կառավարչական մտքի ծագումնաբանությունը» դոկտորական ատենախոսությունն արդիական և ավարտուն հետազոտական աշխատանք է, որում հեղինակը անդրադարձել է ռուսական սոցիալական փիլիսոփայության մտքի համատեքստում անձի տեսամեթոդաբանական և փիլիսոփայական վերլուծությանն ու արժևորմանը: Ատենախոսության մեջ ձևակերպված հետևություններն ու եզրակացությունները փաստարկված են, աչքի են ընկնում հետևողականությամբ ու տեսական հիմնավորվածությամբ: Ատենախոսության հետազոտական արդյունքներն ու գիտական նորույթը արտացոլված են եզրակացություններում, որոնք բխում են առաջադրված խնդիրների պարզաբանումից:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել Կարինա Քաջիկի Օհանյանի դոկտորական ատենախոսության թեման՝ ըստ Թ.00.01՝ «Փիլիսոփայական գիտություններ» մասնագիտական շիֆրի:
2. Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել սույն գրության (1) կետում ներկայացված ընդունված որոշումը, այն է՝ հաստատել Կարինա Քաջիկի Օհանյանի «Կառավարչական մտքի ծագումնաբանությունը ռուսական սոցիալական փիլիսոփայության մեջ

անձի տեսական-մեթոդաբանական վերլուծության համատեքստում» («ГЕНЕЗИС УПРАВЛЕНЧЕСКОЙ МЫСЛИ В КОНТЕКСТЕ ТЕОРЕТИКО-МЕТОДОЛОГИЧЕСКОГО АНАЛИЗА ЛИЧНОСТИ В РОССИЙСКОЙ СОЦИАЛЬНОЙ ФИЛОСОФИИ») Թ.00.01 «Փիլիսոփայական գիտություններ» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության թեման:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:

Ամբիոնի վարիչ՝ Հ.Հովհաննիսյան

Նիստի քարտուղար՝ Գ.Աբգարյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

**ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY
AFTER KHACHATUR ABOVYAN
DEPARTMENT OF PHILOSOPHY AND LOGIC
NAMED AFTER ACADEMICIAN GEORG BRUTIAN**



Երևան՝ 10, Տիգրան Մեծի 17
Հեռ.՝ 597 065
Էլ.փոստ ՝chairofphilosophy@gmail.com;
philos-logic25@aspu.am
Բլոգ՝ chairoflogicphiloscult.wordpress.com

Yerevan: 10, Tigran Mets ave. 17
Phone: 597 065
E. mail: chairofphilosophy@gmail.com;
philos-logic25@aspu.am
Blog: chairoflogicphiloscult.wordpress.com

05.12.2019 թ.

## ՆԻՍՏ ԹԻՎ 5

Նիստին մասնակցում էին Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, պրոֆեսոր Ռոբերտ Ջիջյանը, դոցենտներ Հովհաննես Հովհաննիսյանը, Անդրանիկ Ստեփանյանը, Աշոտ Գևորգյանը, Սուսաննա Դավթյանը, Դավիթ Մոսինյանը, ասիստենտ Հրանտ Քոչարյանը, դասախոսներ Մարինե Շահբազյանը, Նելլի Պետրոսյանը, ավագ մասնագետ Գայանե Աբգարյանը:

### ՕՐԱԿԱՐԳ՝

Հեռակա ասպիրանտուրայի 1 տեղի համար «Փիլիսոփայություն» առարկայի ընդունելության քննության կազմակերպման հարցը.

- ✓ քննական հարցաշարի հաստատում,
- ✓ քննական տոմսերի հաստատում
- ✓ քննությունն ընդունող հանձնաժողովի կազմի հաստատում:

1. Ամբիոնում իրականացվող կուրսային և դիպլոմային աշխատանքների ընթացքի քննարկում:
2. Ասպիրանտների թեկնածուական մինիմումի քննությունների արդյունքների ներկայացում և ամրագրում:
3. Ընթացիկ հարցեր

- ✓ Հեռակա համակարգի դասընթացների դասացուցակների դիտարկում և ամրագրում:

- ✓ Հեռակա համակարգի դասընթացների ավարտական քննությունների ընթերակաների ամրագրում:
- ✓ Աղավնաձորի սպորտ բազա և այլն:

**ԼՍԵՑԻՆ՝** օրակարգի առաջին հարցը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ ՝** ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, ով հիշեցրեց,որ հեռակա ասպիրանտուրայի 1 տեղի համար «Փիլիսոփայություն» առարկայի ընդունելության քննության կազմակերպման հարցն է՝

- ✓ քննական հարցաշարի հաստատում,
- ✓ քննական տոմսերի հաստատում
- ✓ քննությունն ընդունող հանձնաժողովի կազմի հաստատում:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** Հ.Հովհաննիսյանը, Ռ.Ջիջյանը, Է.Գրիգորյանը, Ս.Դավթյանը, Ա.Ստեփանյանը, Ա.Գևորգյանը, Հովհ.Հովհաննիսյանը, Դ.Մոսինյանը, Հ.Քոչարյանը, Մ.Շահբազյանը ովքեր նշեցին, որ 2019-2020ուս. տարվա քննությունների հարցաշարերը կազմվել են նախորդ ուս. տարվա հարցաշարերի հիման վրա, որոնցում ըստ անհրաժեշտության կատարվել են փոփոխություններ:

«Փիլիսոփայություն» առարկայի ընդունելության քննական հարցաշարը և քննական տոմսերը կցվում են, իսկ ընդունող հանձնաժողովի կազմը ներկայացվում է ստորև՝

- ✓ հանձնաժողովի նախագահ՝ փ.գ.դ., դոցենտ Հասմիկ Հովհաննիսյան,
- ✓ հանձնաժողովի անդամներ՝

փ.գ.դ., պրոֆեսոր Ռոբերտ Ջիջյան, փ.գ.թ., դոցենտ Հովհաննես Հովհաննիսյան

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** հաստատել 2019-2020 ուս. տարվա Փիլիսոփայություն» առարկայի ընդունելության քննության կազմակերպման հարցը.

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:

**ԼՍԵՑԻՆ՝** Ամբիոնում իրականացվող կուրսային և դիպլոմային աշխատանքների ընթացքի քննարկում:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝** պրոֆեսոր Հ.Հովհաննիսյանը, դոցենտներ Ս.Դավթյանը, Ա.Ստեփանյանը, Ա.Գևորգյանը, Հովհ.Հովհաննիսյանը, ովքեր ներկայացրին իրենց գիտական ղեկավարությամբ գրվող աշխատանքների ընթացքը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** Դ.Մոսինյանը, Հ.Քոչարյանը, Մ.Շահբազյանը ովքեր մեկ անգամ ևս շեշտեցին կուրսային և դիպլոմային աշխատանքների կարևորությունը և արձանագրեցին, որ աշխատանքներն ամբիոնում ընթանում են բնականոն հունով:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Ամբիոնում իրականացվող "Հասարակագիտություն" մասնագիտությամբ 3 կուրսային և 4 ավարտական աշխատանքների ընթացքը գնահատել "լավ" և հանդիպել մեկ շաբաթ հետո՝ քննարկելու կատարված դիտողությունների ու առաջադրանքների իրագործման աստիճանը:

**ԼՍԵՑԻՆ՝** Ասպիրանտների թեկնածուական մինիմումի քննությունների արդյունքների ներկայացում և ամրագրում:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝** Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, պրոֆեսոր Ռո-բերտ Ջիջյանը,ովքեր խոսեցին մինիմումի քննությունների ընթացքի, ուսանողների պատրաստվածության և արդյունքների մասին :

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝**դոցենտներ Հովհաննես Հովհաննիսյանը, Անդրանիկ Ստե-փանյանը, Աշոտ Գևորգյանը, ովքեր նշեցին, որ մինիմումի քննությունների այս տարվա արդյունքները բավական գոհացնող են, ինչը խոսում է ուսանողների պատրաստվածության որակի բարձրացման մասին:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**Ընդունել ի գիտություն ասպիրանտների և հայցորդների լավ պատրաստվածությունն արտացոլող գնահատականները:

**ԼՍԵՑԻՆ՝** Ընթացիկ հարցեր

- ✓ Հեռակա համակարգի դասընթացների դասացուցակների դիտարկում և ամրագրում:
- ✓ Հեռակա համակարգի դասընթացների ավարտական քննությունների ընթերակաների ամրագրում:
- ✓ Աղավնաձորի սպորտ բազա և այլն:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝** ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը: Հասմիկ Հովհաննիսյանը նախ անդրադարձավ հեռակա դասընթացների դասացուցակներին,ապա խոսեց հեռակա համակարգի դասընթացների ավարտական քննությունների ընթերակա դասախոսների ամրագրման մասին:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հնարավոր փոփոխությունների դեպքում նախապես հայտնել դրանց մասին ամբիոնի ավագ մասնագետ Գայանե Աբգարյանին

Հանձնարարել ՊԴԱ մեկ անգամ ևս հետևել իրենց Ծանրաբեռնվածության մեջ ամրագրված հեռակա դասընթացների ընթերակայությանը տրված ժամաքանակին և առաջնորդվել ըստ դրա:

Հանձնարարել ամբիոնի ավագ մասնագետ Գայանե Աբգարյանին կազմել ընթերակաների գրաֆիկ՝ ըստ ՊԴԱ ծանրաբեռնվածության:

Ընդունել ի գիտություն ՀՊՄՀ ռեկտորի հրամանը։

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն։

Ամբիոնի վարիչ՝ Հ.Հովհաննիսյան

Նիստի քարտուղար՝ Գ.Աբգարյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

**ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY
AFTER KHACHATUR ABOVYAN
DEPARTMENT OF PHILOSOPHY AND LOGIC
NAMED AFTER ACADEMICIAN GEORG BRUTIAN**

Երևան՝ 10, Տիգրան Մեծի 17
Հեռ.՝ 597 065
Էլ.փոստ՝ chairofphilosophy@gmail.com; philos-logic25@aspu.am
Բլոգ՝ chairoflogicphiloscult.wordpress.com

Yerevan: 10, Tigran Mets ave. 17
Phone: 597 065
E. mail: chairofphilosophy@gmail.com; philos-logic25@aspu.am
Blog: chairoflogicphiloscult.wordpress.com

09.03.2020 թ.

## ՆԻՍՏ ԹԻՎ 6

Նիստին մասնակցում էին Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, պրոֆեսոր Ռոբերտ Ջիջյանը, դոցենտներ Հովհաննես Հովհաննիսյանը, Անդրանիկ Ստեփանյանը, Աշոտ Գևորգյանը, Սուսաննա Դավթյանը, Դավիթ Մոսինյանը, ասիստենտ Հրանտ Քոչարյանը, դասախոսներ Մարինե Շահբազյանը, Նելլի Պետրոսյանը, ավագ մասնագետ Գայանե Աբգարյանը:

**ՕՐԱԿԱՐԳ՝**

1. Կարինե Օհանյանի դոկտորական ատենախոսության քննարկումը (նախապաշտպանությունը):

**ԼՍԵՑԻՆ՝** Կարինե Օհանյանի «Կառավարչական մտքի ծագումնաբանությունը ռուսական սոցիալական փիլիսոփայության մեջ անձի տեսական-մեթոդաբանական վերլուծության համատեքստում» («ГЕНЕЗИС УПРАВЛЕНЧЕСКОЙ МЫСЛИ В КОНТЕКСТЕ ТЕОРЕТИКО-МЕТОДОЛОГИЧЕСКОГО АНАЛИЗА ЛИЧНОСТИ В РОССИЙСКОЙ СОЦИАЛЬНОЙ ФИЛОСОФИИ») դոկտորական ատենախոսության քննարկումը (նախապաշտպանությունը):

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ Ամբիոնի վարիչ Հ.Հովհաննիսյանը, ով ներկայացրեց Կարինե Քաջիկի Օհանյանին և նշեց, որ Կ.Օհանյանի գիտական գործունեությանը շատերին քաջածանոթ է: Այնուհետև նա խոսքը տրամադրեց Կ.Օհանյանին իր «Կառավարչական մտքի ծագումնաբանությունը ռուսական սոցիալական փիլիսոփայության մեջ անձի տեսական-մեթոդաբանական վերլուծության համատեքստում» («ГЕНЕЗИС УПРАВЛЕНЧЕСКОЙ МЫСЛИ В КОНТЕКСТЕ ТЕОРЕТИКО-МЕТОДОЛОГИЧЕСКОГО АНАЛИЗА ЛИЧНОСТИ В РОССИЙСКОЙ СОЦИАЛЬНОЙ ФИЛОСОФИИ») աշխատանքը ներկայացնելու համար:

Կ. Օհանյանի ելույթի ռուսերեն տեքստը և սահիկահանդեսը կցվում են սույն արձանագրությանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ք.Օհանյանը, Ռ.Ջիջյանը,Ս. Դավթյանը, Ա.Գևորգյանը և Ա.Ստեփանյանը: Պրոֆեսոր Ռ.Ջիջյանը նշեց, որ ատենախոսական աշխատանքը շատ դրական տպավորություն է թողնում, հատկապես հետազոտության նշանակալի գիտական նորույթը (էջ 15) և պաշտպանության ներկայացված գիտական արդյունքները (էջ 19): Նա շնորհավորեց ատենախոսին առաջին անգամ ղեկավարի անձի ինտեգրալ հայեցակարգի մշակման համար: Նա նշեց նաևոր ուրախալի է նաև, որ Կարինա Օհանյանը կյանք է տվել Ա.Ի. Ստրոնինի սոցիալ-փիլիսոփայական ժառանգությանը:

Ա.Ստեփանյանը նշեց որ Օհանյան Կարինա Քաջիկի «Ռուսական սոցիալական փիլիսոփայությունում անձի տեսամեթոդաբանական վերլուծությունը. Կառավարչական մտքի ծագումնաբանությունը» դոկտորական ատենախոսությունն արդիական և ավարտուն հետազոտական աշխատանք է, որում հեղինակը անդրադարձել է ռուսական սոցիալական փիլիսոփայության մտքի համատեքստում անձի տեսամեթոդաբանական և փիլիսոփայական վերլուծությանն ու արժևորմանը: Ատենախոսության մեջ ձևակերպված հետևություններն ու եզրակացությունները փաստարկված են, աչքի են ընկնում հետևողականությամբ ու տեսական հիմնավորվածությամբ: Ատենախոսության հետազոտական արդյունքներն ու գիտական նորույթը արտացոլված են

եզրակացություններում, որոնք բխում են առաջադրված խնդիրների պարզաբանումից:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել Կարինա Քաջիկի Օհանյանի դոկտորական ատենախոսության թեման՝ ըստ Թ.00.01՝ «Փիլիսոփայական գիտություններ» մասնագիտական շիֆրի:
2. Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել սույն գրության (1) կետում ներկայացված ընդունված որոշումը, այն է՝ հաստատել Կարինա Քաջիկի Օհանյանի «Կառավարչական մտքի ծագումնաբանությունը ռուսական սոցիալական փիլիսոփայության մեջ անձի տեսական-մեթոդաբանական վերլուծության համատեքստում» («ГЕНЕЗИС УПРАВЛЕНЧЕСКОЙ МЫСЛИ В КОНТЕКСТЕ ТЕОРЕТИКО-МЕТОДОЛОГИЧЕСКОГО АНАЛИЗА ЛИЧНОСТИ В РОССИЙСКОЙ СОЦИАЛЬНОЙ ФИЛОСОФИИ») Թ.00.01 «Փիլիսոփայական գիտություններ» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության թեման:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:

Ամբիոնի վարիչ՝ Հ.Հովհաննիսյան

Նիստի քարտուղար՝ Գ.Աբգարյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ
ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY
AFTER KHACHATUR ABOVYAN
DEPARTMENT OF PHILOSOPHY AND LOGIC
NAMED AFTER ACADEMICIAN GEORG BRUTIAN



Երևան՝ 10, Տիգրան Մեծի 17 | Ереван: 10, Тиграна Меца 17
Հեռ.՝ 597 065 | Тел.: 597 065
Էլ.փոստ ՝ chairofphilosophy@gmail.com; philos-logic25@aspu.am | Эл.почта: ՝ chairofphilosophy@gmail.com; philos-logic25@aspu.am
Բլոգ՝ chairoflogicphiloscult.wordpress.com | Блог: chairoflogicphiloscult.wordpress.com

24.03.2020թ.

**ՆԻՍՏ ԹԻՎ 7**

Նիստին մասնակցում էին Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, պրոֆեսոր Ռոբերտ Ջիջյանը, Քաջիկ Օհանյանը, դոցենտներ Անդրանիկ Ստեփանյանը, Աշոտ Գևորգյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Դավիթ Մոսինյանը, ասիստենտ Հրանտ Քոչարյանը, դասախոսներ Մարինե Շահբազյանը, Նելլի Պետրոսյանը:

**Օրակարգ՝**

1. Մոտեցումներ և դիտարկումների առաջարկում մինչև ուսումնական գործընթացի բնականոն ընթացքի վերականգնումը ուսումնամեթոդական աշխատանքը կազմակերպելու շուրջ:
2. Միջանկյալ ստուգումների եղանակներն ու ժամանակացույցը:
3. Միջանկյալների առցանց իրականացման մոտեցումները:
4. Ընթացիկ հարցեր:

**Լսեցին՝** օրակարգի առաջին հարցը:

**Ելույթ ունեցավ՝** Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, ով նախ նշեց, որ իհարկե օնլայն աշխատանքը անսովոր է բոլորի համար և անցումը լսարանային առցանցի դժվարություններ իր հետ բերեց, սակայն այդ դժվարություններն արդեն իսկ հաղթահարված են, քանի որ ՀՊՄՀ-ում դեռևս տարիներ առաջ ներդրված Google Classroom համակարգը մեծապես օգնում է որակյալ առցանց ուսուցում կազմակերպելու համար: Հասմիկ Հովհաննիսյանը դասախոսներին

խնդրեց առաջարկել մոտեցումներ և դիտարկումներ՝ ուսումնամեթոդական աշխատանքի կազմակերպման շուրջ:

**Արտահայտվեցին՝** փ.գ.թ. Աշոտ Գևորգյանը, ով նշեց, որ Google Classroom հարթակն այս օրերին շատ է օգնում թե՛ ուսանողներին, թե՛ դասախոսներին: Նա հավելեց, որ դասապրոցեսի իրականացմանը օգնում է նաև ուսանողների՝ Classroom հարթակից օգտվելու հմտությունները: Աշոտ Գևորգյանն ասաց, որ Meet հարթակը, որով իրականացվում են տեսադասերը, մի շարք գործիքներ ունի, որոնք հնարավորություն են տալիս դասը կազմակերպել ավելի ինտերակտիվ և հետաքրքիր եղանակներով: Նա նշեց, որ դասապրոցեսի իրականացումը դեռևս իրականանում է բնականոն հունով և զուցե նոր դիտարկումներ առաջ գան հետագայում՝ միջանկյալ ստուգումների և բանավոր քննությունների ժամանակ: Պրոֆեսոր Ջիջյանը նկատեց, որ եթե լսարանում շատ հաճախ լինում էին բացակա ուսանողներ՝ կապված տարբեր հարցերի հետ, այժմ ավելի շատ ուսանողներ են կարողանում ներկա լինել, նա նաև հավելեց, որ օգտագործում է Meet հարթակի Share Screen գործիքը և այդ ձևով ուսանողներին ցույց է տալիս սահիկահանդեսներ:

Հասմիկ Հովհաննիսյանը խնդրեց ուսումնամեթոդական գործընթացի շուրջ դիտարկումներ և առաջարկներ ունենալու դեպքում ուղարկել դրանք ամբիոնի էլեկտրոնային հասցեին:

Որոշեցին ընդունել ի գիտություն, բնականոն կերպով իրականացնել դասընթացները առաջարկությունների դեպքում դրանք ներկայացնել ամենշաբաթյա աշխատանքային հանդիպման ընթացքում:

**Լսեցին՝** օրակարգի երկրորդ և երրորդ հարցերը:

**Ելույթ ունեցավ** Հասմիկ Հովհաննիսյանը, ով նշեց, որ արդեն մոտենում է միջանկյալ ստուգումների իրականացման ժամանակահատվածը: Նա նշեց, որ բակալավրիատի 1-ին, 2-րդ և 4-րդ կուրսերում արդեն իսկ իրականացվում են միջանկյալ ստուգումներ, մի շարք ֆակուլտետներում ընդհատվել է երրորդ կուրսի ուսանողների ուսումնական պրակտիկան և նրանք նույնպես հանձնում են միջանկյալ քննությունները: Հասմիկ Հովհաննսյանը նշեց, որ միջանկյալ աշխատանքները ևս պետք է անկացվեն առցանց՝ Google Classroom հարթակի միջոցով: Նա նշեց, որ այնտեղ կարող են տեղադրել

առաջադրանքներ, Google forms գործիքի միջոցով ստեղծել արագ պատրաստվող թեստեր:

**Արտահայտվեց** փ.գ.թ. Անդրանիկ Ստեփանյանը, ով նշեց, որ միջանկյալ քննություններն իր առարկայի պարագայում նախատեսում է իրականացնել թեստերի և էսսեների միջոցով: Դասախոս Մարինե Շահբազյանն էլ ասաց, որ միջանկյալ աշխատանքները հիմնականում ռեֆերատների և վերլուծական աշխատանքների ձևով է նախատեսում իրականացնել, սակայն միայն աշխատանքն ուղարկելը բավարար չի լինի ուսանողին գնահատելու համար, նա նշեց, որ իր դիտարկմամբ՝ ուսանողը պետք է նաև ներկայացնի իր աշխատանքը Meet հարթակում հանդիպման ժամանակ: Աշոտ Գևորգյանը հավելեց, որ ստեղծված իրավիճակում առաջադրանքների, թեստերի, վերլուծական աշխատանքների ձևով իրականացումը լուծում է, սակայն կարծում է, որ հետագայում ավելի մեծ դժվարություններ կլինեն բանավոր քննությունների անցկացման ժամանակ:

Սահմանված կարգով և ժամանակացույցով իրականացնել միջանկյալ ստուգումները՝ դասընթացի առանձնահատկություններին համապատասխան:

Ամբիոնի վարիչ՝ Հ. Հովհաննիսյան

Նիստի քարտուղար՝ Տ. Արշակյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ
ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY
AFTER KHACHATUR ABOVYAN
DEPARTMENT OF PHILOSOPHY AND LOGIC
NAMED AFTER ACADEMICIAN GEORG BRUTIAN



Երևան՝ 10, Տիգրան Մեծի 17
Հեռ.՝ 597 065
Էլ.փոստ ՝ chairofphilosophy@gmail.com; philos-logic25@aspu.am
Բլոգ՝ chairoflogicphiloscult.wordpress.com

Ереван: 10, Тиграна Меца 17
Тел.: 597 065
Эл.почта: ` chairofphilosophy@gmail.com; philos-logic25@aspu.am
Блог: chairoflogicphiloscult.wordpress.com

31.03.2020թ.

## ՆԻՍՏ ԹԻՎ 8

Նիստին մասնակցում էին Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, պրոֆեսոր Ռոբերտ Ջիջյանը, Քաջիկ Օհանյանը, դոցենտներ Անդրանիկ Ստեփանյանը, Աշոտ Գևորգյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Դավիթ Մոսինյանը, ասիստենտ Հրանտ Քոչարյանը, դասախոսներ Մարինե Շահբազյանը, Նելլի Պետրոսյանը:

**Օրակարգ՝**

1. Պ.Ֆ.*Լեսգաֆտի անվան* ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և առողջության ազգային պետական *համալսարանում կազմակերպվող գիտաժողովի մասին տեղեկատվության տրամադրում:*
2. Առցանց դասախոսությունների տեսաձայնագրման և դրանց՝ Google Classroom հարթակում տեղադրելու անհրաժեշտությունը:
3. Առցանց միջանկյալ քննությունների տևողության փոփոխության վերաբերյալ հարցեր:
4. Կուրսային և դիպլոմային աշխատանքների ընթացքին վերաբերող հարցեր:
5. Ընթացիկ հարցեր:

**Լսեցին՝** Պ.Ֆ.*Լեսգաֆտի անվան* ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և առողջության ազգային պետական *համալսարանում կազմակերպվող գիտաժողովի մասին տեղեկատվության տրամադրում:*

***Ելույթ ունեցավ*** *փիլ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Քաջիկ Օհանյանը, ով ներկայացրեց* ՝ Պ.Ֆ.*Լեսգաֆտի անվան* ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և առողջության

ազգային պետական *համալսարանում կազմակերպվելիք գիտաժողովի մանրամասները՝ փոխանցելով նաև գիտաժողովի վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվությունը:*

***Արտահայտվեց՝*** *Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, ով նշեց, որ ողջունելի է նմանօրինակ գիտաժողովների կազմակերպումը և հավելեց, որ անպայման մանրամասնորեն կծանոթանա գիտաժողովի մասին տրամադրված տեղեկատվությանը:*

**Լսեցին՝** Առցանց դասախոսությունների տեսաձայնագրման և դրանց՝ Google Classroom հարթակում տեղադրելու անհրաժեշտությունը:

Առցանց միջանկյալ քննությունների տևողության փոփոխության վերաբերյալ հարցեր:

**Ելույթ ունեցավ՝** Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, ով դասախոսներին ներկայացրեց առցանց դասախոսությունների տեսաձայնագրման և դրանց՝ Google Classroom հարթակում տեղադրելու անհրաժեշտությունը: Հասմիկ Հովհաննիսյանը նշեց, որ իրավիճակի պայմաններում ուսումնական գործընթացը վերահսկելու տարբերակ է և բացի դա սա հնարավորություն կտա բացակա ուսանողներին հետագայում լրացնելու բաց թողած դասերը:

Հասմիկ Հովհաննիսյանը հավելեց նաև, որ ռեկտորատի որոշմամբ՝ այսուհետ առցանց հարթակում միջանկյալ քննություններ անցկացնելիս ուսանողներին պետք է հատկացնել 90 րոպե նախկին 80-ի փոխարեն՝ նշելով, որ տասը րոպեն պետք է տրամադրվի տեխնիկական հնարավոր խնդիրների հարթմանը:

**Լսեցին՝** Կուրսային և դիպլոմային աշխատանքների ընթացքին վերաբերող հարցեր:

**Ելույթ ունեցան** Աշոտ Գևորգյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Անդրանիկ Ստեփանյանը և Հասմիկ Հովհաննիսյանը: Աշոտ Գևորգյանը նշեց, որ իր ղեկավարությամբ գրող ավարտական աշխատանքն արդեն ավարտական փուլում է և հասարակագիտություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողի՝ Սեյրան Սարգսյանի հետ միասին փորձել են ստանալ ավարտական աշխատանքի բոլոր պահանջներին համապատասխանող աշխատանք: Հովհաննես Հովհաննիսյանը նշեց, որ իր ղեկավարությամբ գրվող դիպլոմային աշխատանքը դեռևս ընթացքի փուլում է և դեռ վերջնական փուլում չէ: Անդրանիկ Ստեփանյանը նշեց, որ իր ղեկավարությամբ դիպլոմային աշխատանք գրող, հասարակագիտություն

մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Էլեն Դավթյանն աշխատանքն ավարտել է և այժմ միասին կատարում են վերջնական ուղղումները: Անդրանիկ Ստեփանյանը զեկուցեց նաև իր ղեկավարությամբ գրվող կուրսային աշխատանքի ընթացքի շուրջ, նշելով, որ ղեկավարում է հասարակագիտություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Հայկ Մնացականյանի կուրսային աշխատանքը և հավելեց, որ կուրսային աշխատանքը ընթացքի փուլում է և շուտով կհասնեն վերջնարդյունքին: Ամբիոնի վարիչ Համիկ Հովհաննիսյանը ներկայացրեց իր ղեկավարությամբ գրվող ավարտական աշխատանքի ընթացքը՝ նշելով, որ ուսանողը՝ հասարակագիտություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Քրիստինե Ավետիսյանը կատարել է բավական մեծ աշխատանք, նա նշեց, որ միասին աշխատելու արդյունքում՝ աշխատանքը շուտով կմտնի ավարտական փուլ: Համիկ Հովհաննիսյանը հավելեց նաև, որ իր ղեկավարությամբ կուրսային աշխատանք է գրում հասարակագիտություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Էդուարդ Սարյանը, նա նշեց, որ կուրսային աշխատանքը ընթացիկ փուլում է և ներկայացվելիք ժամկետներում այն կլինի պատրաստ:

Որոշեցին ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ՝  Հ. Հովհաննիսյան

Նիստի քարտուղար՝ Տ. Արշակյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ
ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY
AFTER KHACHATUR ABOVYAN
DEPARTMENT OF PHILOSOPHY AND LOGIC
NAMED AFTER ACADEMICIAN GEORG BRUTIAN



Երևան՝ 10, Տիգրան Մեծի 17
Հեռ.՝ 597 065
Էլ.փոստ ՝chairofphilosophy@gmail.com; philos-logic25@aspu.am
Բլոգ՝ chairoflogicphiloscult.wordpress.com

Ереван: 10, Тиграна Меца 17
Тел.: 597 065
Эл.почта: ` chairofphilosophy@gmail.com; philos-logic25@aspu.am
Блог: chairoflogicphiloscult.wordpress.com

09.04.2020թ.

**ՆԻՍՏ ԹԻՎ 9**

Նիստին մասնակցում էին Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, պրոֆեսոր Ռոբերտ Ջիջյանը, Քաջիկ Օհանյանը, դոցենտներ Անդրանիկ Ստեփանյանը, Աշոտ Գևորգյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Դավիթ Մոսինյանը, ասիստենտ Հրանտ Քոչարյանը, դասախոսներ Մարինե Շահբազյանը, Նելլի Պետրոսյանը:

**Օրակարգ՝**

1. Ավարտական աշխատանքների նախապաշտպանության առաջին փուլի ժամկետների որոշում:
2. ԿԷԿ բաժին ներկայացվող հաշվետվությունների շուրջ:

**Լսեցին՝** Ավարտական աշխատանքների նախապաշտպանության առաջին փուլի ժամկետների որոշումը:

***Ելույթ ունեցավ*** *Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, ով նշեց, որ մեկշաբաթյա ժամկետում պետք է կազմակերպել ամբիոնում գրվող ավարտական աշխատանքների նախապաշտպանության առաջին փուլը, որին ուսանողները պետք է ներկայացնեն այն աշխատանքը, որը կատարել են: Նա նշեց, որ սա նախապաշտպանության վերջնական փուլը չէ և սրանից հետո նախատեսվում է իրականացնել նաև նախապաշտպանության երկրորդ փուլ:*

*Հասմիկ Հովհաննիսյանը հավելեց, որ նախապաշտպանության առաջին փուլը իրականանալու է Google Meet հավելվածի միջոցով և ուսանողները պետք է նախապես ստուգեն համացանցային հասանելիությունը, միկրոֆոնի և տեսախցիկի սարքին լինելը: Նա նաև նշեց, որ իր ղեկավարությամբ գրվող ավարտական աշխատանքը պատրաստ է նախապաշտպանության առաջին փուլին:*

***Արտահայտվեց՝*** *Փ.գ.թ., դոցենտ Աշոտ Գևորգյանը, ով նշեց, որ իր ղեկավարությամբ գրվող ավարտական աշխատանքը պատրաստ է նախապաշտպանության առաջին փուլին ներկայացվելու համար: Փ.գ.թ. դոցենտ Անդրանիկ Ստեփանյանը նշեց, որ իր ղեկավարությամբ գրվող աշխատանքն արդեն ավարտական փուլում է և հավելեց, որ նախապաշտպանության այս փուլը ուսանողներին հնարավորություն կտա ուսանողներին ավելի վստահ և պատրաստված գնալ ավարտական աշխատանքների պաշտպանությանը: Արտահայտվեց նաև փ.գ.թ. Հովհաննես Հովհաննիսյանը, ով հավելեց, որ իր ղեկավարությամբ ավարտական աշխատանք գրող ուսանողը նույնպես պատրաստ է ներկայանալու նախապաշտպանության առաջին փուլին: Նա նաև նշեց, որ սա լավ հնարավորություն է ուսանողների համար՝ իրենց խոսքը ավելի գրագետ, տպավորիչ և վստահ դարձնելու համար:*

***Որոշեցին՝*** *ավարտական աշխատանքների առցանց նախապաշտպանության առաջին փուլը իրականացնել ապրիլի 22-ին:*

**Լսեցին՝** ԿԷԿ բաժին ներկայացվող հաշվետվությունների շուրջ:

***Ելույթ ունեցավ*** *Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, ով նշեց որ յուրաքանչյուր շաբաթ պետք է կրթության էլեկտրոնային կառավարման բաժին ներկայացնել հաշվետվություն՝ առցանց կատարած աշխատանքի վերաբերյալ: Հասմիկ Հովհաննիսյանն ասաց, որ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հաշվետվության սանդղակի յուրաքանչյուր բաղադրիչին, դրանք լրացնել և ամեն շաբաթ ուղարկել ամբիոնի էլեկտրոնային հասցեին:*

Որոշեցին ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ՝ Հ. Հովհաննիսյան

Նիստի քարտուղար՝ Տ. Արշակյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY
AFTER KHACHATUR ABOVYAN
DEPARTMENT OF PHILOSOPHY AND LOGIC
NAMED AFTER ACADEMICIAN GEORG BRUTIAN



Երևան՝ 10, Տիգրան Մեծի 17
Հեռ.՝ 597 065
Էլ.փոստ ՝chairofphilosophy@gmail.com;
philos-logic25@aspu.am
Բլոգ՝ chairoflogicphiloscult.wordpress.com

Ереван: 10, Тиграна Меца 17
Тел.: 597 065
Эл.почта: ՝ chairofphilosophy@gmail.com;
philos-logic25@aspu.am
Блог:
chairoflogicphiloscult.wordpress.com

22.04.2020թ.

**ՆԻՍՏ ԹԻՎ 10**

Նիստին մասնակցում էին Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, պրոֆեսոր Ռոբերտ Ջիջյանը, Քաջիկ Օհանյանը, դոցենտներ Անդրանիկ Ստեփանյանը, Աշոտ Գևորգյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Դավիթ Մոսինյանը, ասիստենտ Հրանտ Քոչարյանը, դասախոսներ Մարինե Շահբազյանը, Նելլի Պետրոսյանը, ավարտական կուրսի ուսանողներ Քրիստինե Ավետիսյանը, Սեյրան Սարգսյանը, Էլեն Դավթյանը և Մարիամ Խաչատուրովան:

**Օրակարգ՝**

1. Ավարտական աշխատանքների նախապաշտպանության առաջին փուլ:
2. Միջանկյալ և ամփոփիչ քննությունների շուրջ հարցեր:
3. Ընթացիկ հարցեր:

**Լսեցին՝** Ավարտական աշխատանքների նախապաշտպանության առաջին փուլը:

***Ելույթ ունեցավ*** *Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, ով ողջունեց ավարտական կուրսի ուսանողներին: Նա ներկայացրեց այն պահանջները, որոնք պետք է պահվեն ավարտական աշխատանքների նախապաշտպանության առաջին փուլի ընթացքում՝ նշելով, որ ուսանողները պետք է նախապաշտպանության ընթացքում չփակեն իրենց տեսախցիկները: Այնուհետև նա խոսքը*

*փոխանցեց ավարտական աշխատանքներ գրող ուսանողներին և նրանց ղեկավարներին:*

***Արտահայտվեց՝*** *Փ.գ.թ., դոցենտ Անդրանիկ Ստեփանյանը, ով ներկայացրեց իր ղեկավարությամբ ավարտական աշխատանք գրող Էլեն Դավթյանին: Նա նշեց, որ աշխատանքն ավարտական փուլում է, պահված են աշխատանքի տեխնիկական և բովանդակային պահանջները, ինչպես նաև հավելեց, որ օգտվել են մեծաքանակ գրականությունից, ինչն օգնել է թեման ավելի լավ պատկերացնել: Այնուհետև խոսքը փոխանցվեց Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Էլեն Դավթյանին: Նա նշեց, որ իր ուսումնասիրության թեման մշակույթի ձևերի, մեխանիզմների, դինամիկայի դրսևորումներն (առանձնահատկությունները) հայ իրականության մեջ: Նա ներկայացրեց աշխատանքը՝ սահիկահանդեսի օգնությամբ՝նշելով թե այն քանի մասից է բաղկացած, ինչ մեթոդներով է աշխատել և ինչ գրականությունից օգտվել:Հնչեցին հարցեր ուղղված Էլենին՝ աշխատանքի բովանդակային կողմին ծանոթանալու և կատարված աշխատանքն ավելի լավ պատկերացնելու համար:*

*Արտահայտվեց փ.գ.թ դոցենտ Աշոտ Գևորգյանը, ով ներկայացրեց իր ղեկավարությամբ ավարտական աշխատանք գրող Մեյրան Սարգսյանին: Նա նշեց, որ Մեյրանի ուսումնասիրության թեման է «Բարու և չարի հիմնախնդիրը Եղնիկ Կողբացու «Եղծ Աղանդոց» և Կոնֆուցիոսի «Զրույցներ» աշխատություններում»: Աշոտ Գևորգյանն ասաց, որ աշխատանքը գտնվում է ավարտական փուլում և ուսանողը հետևել է ավարտական աշխատանքին ներկայացվող տեխնիկական և բովանդակային պահանջներին: Խոսեց նաև Մեյրան Սարգսյանը, ով հստակ ներկայացրեց իր աշխատանքի նպատակը, խնդիրները, արդիականությունը, պատասխանեց հնչող հարցերին:*

*Արտահայտվեց փ.գ.թ. դոցենտ Հովհաննես Հովհաննիսյանը, ով ներկայացրեց իր ղեկավարությամբ ավարտական աշխատանք գրող Մարիամ Խաչատուրովային: Նա նշեց, որ աշխատանքը դեռևս ընթացիկ փուլում է և առաջիկայում կներկայացնեն վերջնական տարբերակը: Նա խոսքը փոխանցեց Մարիամ Խաչատուրովային, ով նշեց, որ իր աշխատանքի թեման է «Ազգ և ժողովուրդ: Եվրոպական արժեքները ժամանակակից Հայաստանի մշակույթի համակարգում: Մարիամը ներկայացրեց իր կատարած*

*աշխատանքը՝ նշելով, որ առաջնորդվել է ավարտական աշխատանքին ներկայացվող տեխնիկական և բովանդակային պահանջներով: Նա նշեց, որ առաջիկայում՝ նախապաշտպանության երկրորդ փուլին աշխատանքը կներկայացնի արդեն վերջնական տարբերակով:*

*Արտահայտվեց փ.գ.դ., դոցենտ Հասմիկ Հովհաննիսյանը, ով ներկայացրեց իր ղեկավարությամբ ավարտական աշխատանք գրող Քրիստինե Ավետիսյանին: Նա նշեց, որ Քրիստինեի ուսումնասիրության թեման է էքզիստենցիալիստական փիլիսոփայության հիմնական կատեգորիաներն ու խնդրակարգերը հայ գրականության մեջ, մասնավորապես ուսանողն ուսումնասիրել է Աղասի Այվազյանի, Հրանտ Մաթևոսյանի և Վահե Քաչայի աշխատանքները: Նա նշեց, որ աշխատանքն ավարտական փուլում է և առաջիկայում վերջնականորեն պատրաստ կլինի: Խոսք տրվեց նաև Քրիստինե Ավետիսյանին, ով ներկայացրեց աշխատանքի բովանդակությունը՝ հստակ նշելով աշխատանքի նպատակը, խնդիրները, արդիականությունը, օգտագործված գրականության ցանկը:*

***Որոշեցին՝*** *Ընդունել ի գիտություն և նախապաշտպանության երկրորդ փուլ իրականացնել մայիսի 11-ին:*

***Լսեցին՝*** Միջանկյալ և ամփոփիչ քննությունների շուրջ հարցեր:

**Ելույթ ունեցավ՝** Ամբոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, ով նշեց, որ միջանկյալ և ամփոփիչ քննությունները ևս իրականանալու են առցանց հարթակում: Հասմիկ Հովհաննիսյանն ասաց, որ յուրաքանչյուր դասախոս ինքը կընտրի միջանկյալի անցկացման ձևը՝ էլեկտրոնային առաջադրանքների, վերլուծական աշխատանքների, ռեֆերատների կամ թեստի տեսքով: Նա նաև նշեց, որ ամփոփիչ ստուգումները և բանավոր քննությունները ևս կիրականանան առցանց հարթակում, իսկ առաջիկայում կներկայացվեն բանավոր քննությունների իրականացման ուղեցույցները:

Որոշեցին ընդունել ի գիտություն

Ամբիոնի վարիչ՝ Հ. Հովհաննիսյան

Նիստի քարտուղար՝ Տ. Արշակյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY
AFTER KHACHATUR ABOVYAN
DEPARTMENT OF PHILOSOPHY AND LOGIC
NAMED AFTER ACADEMICIAN GEORG BRUTIAN



Երևան՝ 10, Տիգրան Մեծի 17
Հեռ.՝ 597 **065**
Էլ.փոստ ՝ chairofphilosophy@gmail.com;
philos-logic25@aspu.am
Բլոգ՝ chairoflogicphiloscult.wordpress.com

Ереван: 10, Тиграна Меца 17
Тел.: 597 065
Эл.почта: ՝ chairofphilosophy@gmail.com;
philos-logic25@aspu.am
Блог:
chairoflogicphiloscult.wordpress.com

11.05.2020թ.

**ՆԻՍՏ ԹԻՎ 11**

Նիստին մասնակցում էին Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, պրոֆեսոր Ռոբերտ Ջիջյանը, Քաջիկ Օհանյանը, դոցենտներ Անդրանիկ Ստեփանյանը, Աշոտ Գևորգյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Դավիթ Մոսինյանը, ասիստենտ Հրանտ Քոչարյանը, դասախոսներ Մարինե Շահբազյանը, Նելլի Պետրոսյանը, ավարտական կուրսի ուսանողներ Քրիստինե Ավետիսյանը, Սեյրան Սարգսյանը, Էլեն Դավթյանը և Մարիամ Խաչատուրովան:

**Օրակարգ՝**

1. Ավարտական աշխատանքների նախապաշտպանության երկրորդ փուլ:
2. Ընթացիկ հարցեր:

**Լսեցին՝** Օրակարգի առաջին հարցը:

***Ելույթ ունեցավ*** *Փ.գ.թ. դոցենտ Անդրանիկ Ստեփանյանը, ով ներկայացրեց իր ղեկավարությամբ ավարտական աշխատանք գրող Էլեն Դավթյանին, նա նշեց, որ արդեն իսկ պատրաստել է ուսանողի մասին կարծիքը, որը կընթերցի ուսանողի ներկայացումից հետո: Նա խոսքը փոխանցեց Էլեն Դավթյանին: Էլենի աշխատանքի թեման էր՝* «Մշակույթի ձևերի, մեխանիզմների,

դինամիկայի դրսևորումները(առանձնահատկությունները) հայ իրականության մեջ»:

*Էլենը տեսասահիկի միջոցով ներկայացրեց իր աշխատանքը՝ խոսելով աշխատանքի կառուցվածքի, նպատակի, խնդիրների, արդիականության մասին: Նա մանրամասնորեն խոսեց նաև աշխատանքի գլուխների մասին:*

***Արտահայտվեց*** *՝ Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը շնորհակալություն հայտնեց ներկայացման համար, ապա հարց բարձրացրեց աշխատանքի առարկայի և օբյեկտի հետ կապված: Էլենը նշեց, որ այդ հարցին անդրադարձել է ավարտական աշխատանքի ներածական բաժնում: Մեկ այլ հարց հնչեցրեց փիլ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Քաջիկ Օհանյանը: Հարցը վերաբերում էր աշխատանքն իրականացնելիս օգտագործած մեթոդներին: Էլենը նշեց, որ օգտվել է պատմահամեմատական, վերլուծական մեթոդներից, մասնավորապես աշխատանքի երկրորդ գլխում համեմատել է ներկայից և խորհրդային շրջանի հայ հարսանեական արարողությունները, ընտանեկան հարաբերությունները:Արտահայտվեց դոցենտ Հովհաննես Հովհաննիսյանը, ով նախ մի քանի խորհուրդ տվեց ուսանողներին՝ իրենց խոսքը ճիշտ և գրագետ կառուցելու համար, ապա խնդրեց Էլենին ներկայացնել աշխատանքի դասավանդման մեթոդիկան՝ նշելով, որ սա կարևոր հատված է մանկավարժական համալսարանի ուսանողի համար: Էլենը նշեց, որ դասը կներկայացնի դասախոսության միջոցով և «հասկացությունների քարտեզ» մեթոդի օգնությամբ:*

*Արտահայտվեց նաև փիլ.գիտ.թեկնածու Անդրանիկ Ստեփանյանը, ով նշեց, որ նախապաշտպանության առաջին փուլում ներկայացված բոլոր խորհուրդները հաշվի են առնվել և աշխատանքում իրականացվել են համապատասխան փոփոխություններ: Նա նշեց, որ աշխատանքի համար օգտագործված գրականության ցանկը շատ հարուստ է և ուսանողն օգտվել է եռալեզու գրականությունից: Անդրանիկ Ստեփանյանը նշեց, որ ավարտական աշխատանքը համապատասխանում է բոլոր պահանջներին:*

***Որոշեցին*** *՝աշխատանքը երաշխավորել պաշտպանության:*

*Որոշումն ընդունվեց միաձայն:*

***Ելույթ ունեցավ՝*** *Ավարտական կուրսի ուսանող Մեյրան Սարգսյանը: Մեյրանի աշխատանքի թեման էր՝* «Բարու և չարի հիմնախնդիրը Եզնիկ Կողբացու «Եղծ Աղանդոց» և Կոնֆուցիոսի «Զրույցներ» աշխատություններում»:

*Նա տեսասահիկի միջոցով ներկայացրեց իր աշխատանքը՝ խոսելով աշխատանքի կառուցվածքի, նպատակի, խնդիրների, արդիականության մասին: Նա մանրամասնորեն խոսեց նաև աշխատանքի գլուխների, ամփոփիչ եզրահանգումների մասին:*

***Արտահայտվեց*** *Համլիկ Հովհաննիսյանը, ով ուսանողին հարցրեցեթե բարին և չարը դիտենք,որպես ծայրահեղ հասկացություններ, ապա որ հասակացությունն է, որ կդառնա առաքինություն:Մեյրանն անդրադարձավ Արիստոտելի և Կոնֆուցիոսի առաջադրած «ոսկե միջին»-ի գաղափարին, ապա նշեց, որ իր համար բարու և չաի մեջտեղում բարոյականություն հասկացությունն է: Դոցենտ Հովհաննես Հովհաննիսյանը խորհուրդ տվեց աշխատանքի դասավանդման մեթոդիկան ներկայացնել «բանավեճի» մեթոդի միջոցով: Մեյրանը շնորհակալություն հայտնեց, ապա նկատեց, որ երրորդ գլխում անդրադարձել է դասավանդման մեթոդիկային և խոսել է նաև «բանավեճի» մեթոդի մասին: Դոցենտ Հովհաննիսյանը նշեց նաև, որ աշխատանքն ավելի կշահի եթե տեխնիկական կողմը լինի ավելի կոկիկ:*

*Արտահայտվեց նաև փիլ.գիտ.թեկնածու Աշոտ Գևորգյանը, ով նշեց, որ թեարկե կան փոքր թերություններ, բայց դրանք մինչև ամբիոն ներկայացնելը կշտկվեն:*

***Որոշեցին՝*** *աշխատանքը երաշխավորել պաշտպանության:*

*Որոշումն ընդունվեց միաձայն:*

***Ելույթ ունեցավ՝*** *Ավարտական կուրսի ուսանող Քրիստինե Ավետիսյանը: Քրիստինեի աշխատանքի թեման էր՝* «Էքզիստենցիալիստական փիլիսոփայության հիմնական կատեգորիաներն ու խնդրակարգերը հայ գրականության մեջ. Աղասի Այվազյան, Հրանտ Մաթևոսյան, Վահե Քաչա» *:*

*Նա տեսասահիկի միջոցով ներկայացրեց իր աշխատանքը՝ խոսելով աշխատանքի կառուցվածքի, նպատակի, խնդիրների, արդիականության մասին: Նա մանրամասնորեն խոսեց նաև աշխատանքի գլուխների, ամփոփիչ եզրահանգումների մասին:*

***Արտահայտվեց***՝ *պրոֆեսոր Քաջիկ Օհանյանը, ով ցանկացավ իմանալ թե ուսանողն ինչ չափանիշներով աշխատանքում հիշատակվող գրողներին դասում էքզիտենցիալիստական ուղղության ներկայացուցիչների շարքին: Քրիստինեն պատասխանեց, որ կարդալով նրանց աշխատանքները, գտել է որոշակի խնդիրներ, որոնք էքզիստենցիալիզմի ուսումնասիրման առարկան են: Նա առանձնացրեց դրվագների ստեղծագործություններից և ցույց տվեց դրանց կապը էկզիստենցիալիզմի հետ:*

*Արտահայտվեց դոկտոր Հասմիկ Հովհաննիսյանը, ով նշեց, որ իրականացրել են այն բոլոր փոփոխությունները, որոնք առաջարկվել էին նախապաշտպանության առաջին փուլի ժամանակ և հավելեց, որ կշտկվեն բոլոր տեխնիկական սխալները:*

***Որոշեցին***՝ *աշխատանքը երաշխավորել պաշտպանության*

*Որոշումն ընդունվեց միաձայն:*

***Ելույթ ունեցավ***՝ *ավարտական կուրսի ուսանող Մարիամ Խաչատուրովան: Մարիամի աշխատանքի թեման էր*՝ «Ազգ և ժողովուրդ: Եվրոպական արժեքները ժամանակակից Հայաստանի մշակույթի համակարգում»: *Նա տեսասահիկի միջոցով ներկայացրեց խոսելով աշխատանքի կառուցվածքի, նպատակի, խնդիրների, արդիականության մասին:*

*Արտահայտվեցին*՝ պրոֆեսոր Քաջիկ Օհանյանը, դոկտոր Հասմիկ Հովհաննիսյանը, դոցենտ Անդրանիկ Ստեփանյանը: Նրանք նշեցին, որ իհարկե կատարվել է աշխատանք, սակայն կան մի շարք թերություններ և բացթողումներ, որոնք շտկման կարիք ունեն: Աշխատանքի ղեկավար Հովհաննես Հովհաննիսյանը ևս նշեց, որ կան թերություններ, սակայն ժամանակ տրամադրելու դեպքում դրանք արագ կշտկվեն:

**Որոշեցին**՝Մարիամ Խաչատուրովային հնարավորություն տալ մինչև 14.05.2020թ.աշխատանքում իրականացնել փոփոխություններ:

**Ելույթ ունեցավ**՝ Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, ով նշեց, որ այսօր պետք է նաև որոշվեց ավարտական աշխատանքների գրախոսները: Նա նշեց, որ աշխատանքների գրախոսությունը կտրամադրվի այն դասախոսներին, որոնք գիտական հետաքրքրությունը համապատասխանում է աշխատանքի թեմատիկային:

**Որոշեցին**՝ Ավարտական աշխատանքների գրախոսներ նշանակել հետևյալ անձանց՝

| **Ավարտական աշխատանքի վերնագիր** | **Ուսանողի անուն, ազգանուն, հայրանուն** | **Աշխատանքի ղեկավար** | **Աշխատանքի գրախոս** |
|---|---|---|---|
| Էքզիստենցիալիստական փիլիսոփայության հիմնական կատեգորիաներն ու խնդրակարգերը հայ գրականության մեջ. Աղասի Այվազյան, Հրանտ Մաթևոսյան, Վահե Քաչա | Ավետիսյան Քրիստինե Կարենի | Փիլ.գիտ.դոկտոր, դոցենտ Հաս մ ի կ Հովհաննիսյան | Դասախոս Մարինե Շահբազյան |
| Մշակույթի ձևերի, մեխանիզմների, դինամիկայի դրսևորումները(առանձնահատկությունները) հայ իրականության մեջ | Դավթյան Էլեն Դավթի | Փիլ.գիտ.թեկնածու, դոցենտ Անդրանիկ Ստեփանյան | Փիլ.գիտ.թեկնածու, դոցենտ Դավիթ Մոսինյան |
| Ազգ և ժողովուրդ: Եվրոպական արժեքները ժամանակակից Հայաստանի մշակույթի համակարգում | Խաչատուրովա Մարիամ Արամի | Փիլ.գիտ.թեկնածու, դոցենտ Հովհաննես Հովհաննիսյան | Դասախոս Մարինե Շահբազյան |
| Բարու և չարի հիմնախնդիրը Եզնիկ Կողբացու «Եղծ Աղանդոց» և Կոնֆուցիոսի «Զրույցներ» աշխատություններում | Սարգսյան Սեյրան Ջավենի | Փիլ.գիտ.թեկնածու, դոցենտ Աշոտ Գևորգյան | Դասախոս Նելլի Պետրոսյան |

Որոշումն ընդունվեց միաձայն:

Ամբիոնի վարիչ՝ Հ. Հովհաննիսյան

Նիստի քարտուղար՝ Տ. Արշակյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY
AFTER KHACHATUR ABOVYAN
DEPARTMENT OF PHILOSOPHY AND LOGIC
NAMED AFTER ACADEMICIAN GEORG BRUTIAN



Երևան՝ 10, Տիգրան Մեծի 17
Հեռ.՝ 597 065
Էլ.փոստ ՝ chairofphilosophy@gmail.com; philos-logic25@aspu.am
Բլոգ՝ chairoflogicphiloscult.wordpress.com

Ереван: 10, Тиграна Меца 17
Тел.: 597 065
Эл.почта: ՝ chairofphilosophy@gmail.com; philos-logic25@aspu.am
Блог: chairoflogicphiloscult.wordpress.com

14.05.2020թ.

# ՆԻՍՏ ԹԻՎ 12

Նիստին մասնակցում էին Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, պրոֆեսոր Ռոբերտ Ջիջյանը, դոցենտներ Անդրանիկ Ստեփանյանը, Աշոտ Գևորգյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Դավիթ Մոսինյանը, ասիստենտ Հրանտ Քոչարյանը, դասախոսներ Մարինե Շահբազյանը, Նելլի Պետրոսյանը, դոկտորի գիտական աստիճանի հայցվոր Ռոմիկ Խասիբեկի Քոչարյանը։

**ՕՐԱԿԱՐԳ՝** 1.Ռոմիկ Խասիբեկի Քոչարյանի՝ դոկտորի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Մովսես Խորենացու պատմագիտական և պատմափիլիսոփայական մեկ միասնական հայեցակարգի իսկության բացորոշումը հերմենևտիկական մեթոդաբանությամբ» խորագրով ատենախոսության քննարկումը։

**ԼՍԵՑԻՆ՝** օրակարգի առաջին հարցը։

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝** դոկտորի գիտական աստիճանի հայցվոր Ռոմիկ Քոչարյանը, ում խոսքը կցվում է արձանագրությանը։

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ Անդրանիկ Ստեփանյանը, ով նշեց .«Ես կներկայացնեմ աշխատանքի դիտարկումները կոնկրետ էջերով, կոնկրետ նախադասություններով։ Նախ սկսենք նրանից, որ ես կարդացել եմ ձեր դիսերտացիայի ներածությունը, եզրակացությունը, գրականության ցանկը, 4-րդ գլխով եմ անցել, 3-րդ գլխի երկրորդ մասով՝ «Պատումի վարդապետական եղանակը», գլուխ 2-րդը՝ «Պատմության դիտավորությունը» և որոշ մասեր տարբեր գլուխներից։ Իմ առարկությունները 4 էջի սահմաններում վերաբերում են միայն կարդացածին։

Բավականին լավ աշխատանք է գրված։Ես որպես կրոնագետ, որպես կրոնի հերմենևտիկայի նեղ մասնագետ, աստվածաշնչյան հերմենևտիկայի մասնագետ, մեթոդաբանական հերմենևտիկայի մասնագետ՝ կարող եմ ասել, որ բավականին հետաքրքիր համադրություն է կատարվել՝ հերմենևտիկայի պատմության և փիլիսոփայության համադրությամբ։ Բավականին լավ, հոյակապ մտքեր կան,

մասնավորապես՝ «Խորենացու հայոց պատմությունը իմաստասիրող պատմություն է», «Պատմությունն իր բնույթով մեկնողական է և պատմության մեկնությունն այդ առումով մեկնության մեկնություն է», բավական շատ հետաքրքիր մտքեր կան, որոնք առանձին վերցված գիտական նորույթ են իրենցից ներկայացնում: Ընդհանուր առմամբ դիստերտացիայի հետ կապված հետաքրքիր բաներ կան,բառաշինություն և բառակազմություն կա, երկրորդ գլխի երկրորդ մասն ինձ ավելի դուր եկավ քան չորրորդ գլուխը, որը ձեր դիսերտացիայի առանցքն էր, որոշ ձևակերպումներ շատ լավն են, բայց կան նաև որոշ խնդիրներ:
Ես տեսնում եմ երեք հարթության վրա գտնվող խնդիրներ: Առաջին՝ տեքստի մեջ բավականին շատ տեղերում հանդիպում են տեխնիկական բնույթի տառասխալներ, կան տեքստեր, որտեղ նախադասությունը փոքրատառերով է սկսվում, սրբագրման, խմբագրական աշխատանքի կարիք կա, մի շարք էջերում՝ 223-րդ, 236-րդ, 266-270-րդ ու էլի մի քանի տեղեր, որտեղ տառատեսակը փոքր է: Մյուս խնդիրը կապված է դիսերտացիայի ծավալի հետ, եկեք համաձայնենք՝ այս դիսերտացիան բավականին ծավալուն է և իմ համոզմամբ դուք խոսքի հաջող վարպետ եք: Տեքստում կան լավ ձևակերպումներ, ինչպես նաև խրթին ձևակերպումներ, որոնցից հաճախ ոչինչ չենք հասկանում: Ինձ համար դրանք բառակույտ են դառնում, դիսերտացիան կարելի էր կրճատել 200 էջով, եթե այդ կրճատումներն արվեին, այն ավելի կշահեր: Դիսերտացիայի եզրակացությունը կազմում է ներածական գլխի 1/3-ը, դուք 29 էջ գրել եք եզրակացություն, որը չեմ համարում լուրջ, ընդ որում էջեր կան, որտեղ դուք խոսում եք սոցիոլոգիայի մասին, սակայն դիսերտացայի մեջ սոցիոլոգիայի մասին չեք խոսում (գոնե իմ կարդացած մասերում), ընդամենը հղում եք տալիս ձեր ինչ-որ հոդվածի և սոցիոլոգիայի սահմանում եք տալիս՝ երկու հատ՝ ընդ որում՝1-ին և երկրորդ տարբերակներով, ես հիմա չեմ խոսում բովանդակության մասին, շարադրանքն ինքնին լավ է և դուք նշում եք, որ սոցիալական գիտության սահմանումը ըստ առարկայի եք տալիս՝ հղում անելով Քոչարյան Ռ.,. Զիջյան Ա. «Վեմ»-ում տպագրված ձեր հոդվածին, սակայն եզրակացության մեջ մի բան գրել, որը տեքստում չկա, ես չեմ կարծում, որ սա պետք է լինի, մանավանդ, որ ձեր դիսերտացիան լցնելու կարիք չունի: Ներածության հետ կապված խնդիր չեմ տեսնում, եզրակացությունները պետք է 1/3 լինեն, ամեն մեկի համար գրել 2 էջ եզրակացություն, 2 էջ էլ տրամադրել ներածությանը, 10 էջը լիովին բավական է, դուք ունեք էջեր, որտեղ մի պարբերության մեջ հիանալի միտքը կարող էիք ձևակերպել, բայց ամբողջ մի էջ նույն միտքը տարբեր ձևերով ներկայացնում եք՝ ընդ որում տարբեր տեղերում: Դուք ունեք ենթավերնագրեր, «Վարդապետական եղանակը» 50 էջ է կազմում, 20 էջը կարծում եմ բավարար կլիներ: Դուք ունեք 4-րդ գլխի մեջ պատմության սահմանումները, 20 էջ ուղիղ սահմանումներ եք տվել, 20 էջ ստացվում է ջուրծեծոցի, դուք վերցրել եք Խորենացու, Դավիթ Անհաղթի մոդելները, որոնք ըստ էության մի քանի էջով կարելի էր անել: Պատմության 4 պորիաները և պատմագիտական նախընտրելի իսկությունները հաջողված նյութ է, դուք ներկայացնում եք հիմնավորումներ, ապացույցներ՝ հոյակապ աշխատանք է: 440-րդ էջում դուք ունեք «էթիոլոգիա» բառը, հետաքրքիր բացումը եք արել դրա շուրջ՝ «էթիոլոգիա-հոգեբարոյախրատական»:Բացում ենք բառարանը էթիոլգիա բառը բժշկության մեջ նշանակում է հիվանդությունների առաջացման մասին նեղ մասնագիտական բաժին, ֆիզիկայի մեջ առանձին բաժին է, փիլիսոփայության մեջ սկզբնապատճառի ուսումնասիրության ոլորտով զբաղվող ենթաբաժին, ուզում եմ

հասկանալ՝ որտե՞ղից եք վերցրել էթիոլոգիա բառի հոգեբարոյախրատական իմաստը, այսպիսի օրինակեր շատ կան, 355-րդ էջում՝ վարդապետական մասի մեջ, շատ ճիշտ, արդարացիորեն գրում եք՝ հիմնվելով նաև տեսաբանների վրա, որ շատ կարևոր է հերմնենտիկայի մեջ կերպի հարցը, 100 տոկոսով ընդունում եմ դա, բայց 50 էջ դուք կրոնական աստվածաբանություն եք տալիս, պատմության աստվածաբանական լուծումներ եք տալիս, քրիստոնեական լուծումներ, հասկանում ենք, որ Խորենացին քրիստոնեական է, եթե դուք լինեիք այլ կրոնի ներկայացուցիչ դուք նման բան հաստատ չէիք գրի, սա ասում եմ որպես կրոնագետ:

Ձեր ելույթի մեջ նշեցիք միջնադարյան հերմեննտիկայի մասին, միջնադարյան հերմեննտիկա չկա, կա միջնադարյան էգզեգետիկա, որպես հերմեննտիկայի,այսպես ասած, մեկնաբանության պրոցես, բարձրացրել եք հարց՝ «այն ինչ կարող է տեսնել հեղինակը, այն ինչ կարող է տեսնել հեղինակի մեկնաբանողը», այո՛, հերմեննտիկայի մեջ կա նման հարց՝ արդյո՞ք մենք կարող ենք ավելին տեսնել, քան հեղինակը դա կարող էր տեսնել, այո՛ այդ խնդիրը կա, բայց դա շատ վիճահարույց հարց է:

Մյուսը կարևոր հարցը չորրորդ գլխի մեջ է: 4-րդ գլուխը հետաքրքիր գլուխ է, 12 կատեգորիաները, 4 ապորիաները, սահմանումների մասին խոսեցինք: 4-րդ գլխի մեջ՝ 441-րդ էջում, գրում եք մի տեքստ, որն ինձ համար՝ որպես կրոնագետի, որպես կրոնի փիլիսոփայի ընդհանրապես ընդունելի չէ, մենք խոսում ենք գիտականության մասին, դուք 441 էջում գրում եք հետևյալը «Այլև ամենայն ժամանակի ճշմարտորեն հավատացյալ գիտականություն իրագործում է...»: Ի՞նչ է հավատացյալ գիտականությունը, ինչպե՞ս կարելի է գիտություն բառը կապել հավատի հետ, սա վիճահարույց միտք է, սա անընդունելի է գիտական մեթոդաբանության կողմից, մենք կարող ենք կրոնի, հավատքի մասին  տարբեր կարծիքներ ունենալ, սակայն մենք քննարկում ենք գիտական տեքստի մեջ կրոնական  հավատի էլեմենտներ, որոնք փորձում են հավակնել գիտականության: Դուք ներկայացնում եք, որ գիտության և կրոնի մեջ կա ներդաշնակություն, ես Ձեզ ասում եմ, որ նման բան գոյություն չունի: Եթե այս աշխատանքը գնա՝ ԲՈԿ զուտ ծավալի համար ունենալու է լուրջ խնդիր, եթե դուք դիմեք ԲՈԿ-ին ԲՈԿը ձեզ բանավոր պատասխան չի տա, այլ գրավոր կպատասխանի, որ գործում են համաձայն կանոնակարգի, ըստ դրա՝ աշխատանքի ծավալը պետք է լինի 200-300 էջ՝ գումարած 30 տոկոս, այսինքն դիսերտացիան լավագույն դեպքում պետք է լինի 350 էջ, առաջարկում եմ թեթևացնել եզրակացությունը, որպեսզի այն առարկայական լինի: Եզրակացության մեջ մենք ունենք կետեր, որոնցից բաղկացած է այն և դրանց թիվը բավականին շատ է, ի՞նչ սկզբունքով է եզրակացությունը կազմվել, եզրակացության մեջ պետք է լինեին գիտական նորույթները, որոնց դուք անդրադառնում եք սկզբում, սակայն հետո վերանում եք ներածական գլխում ներկայացրած նորույթներից: Մյուս հարցը կապված է գիտական նորույթների հետ, ներածական մասում դուք խոսում եք գիտական նորույթների մասին՝ թվով 20: Դուք ներածության մեջ գրել եք գիտական մշակվածության աստիճանի մասին 3 էջ, որը դոկտորական դիսերտացիայի պարագայում ես չեմ կարծում որ ճիշտ է, մեթոդաբանությունը գրել եք մոտ 7 էջ:Ես չեմ կարծում, որ սա ճիշտ է, գիտական մշակվածության մեջ պետք է հայեցակարգերը ներկայացվեր, որոնք տարբեր հեղինակներ արել էին, բացի այդ գրականության ցանկի մեջ, դուք ունեք և՛ անգլալեզու գրականություն, և՛ ռուսերեն, նշել եք կլասիկներին, Գադամեր, Թահմլեր, ուրախ եմ, որ ունեք Էնթընի Թիսըլթնը, բայց

նույն այս հեղինակը, որից դուք օգտվել եք, առանձին ունի տեսությունների մասին գիրք և նրա դիսերտացիան եղել է նաև հեմենևտիկայի հիմնարար աշխատություններից, որոնք հիշատակված չեն ձեզ մոտ:
Ես Ձեզ առաջարկում եմ, որ այդ վիճահարույց հատվածները հանեք, որոշ շտկումներ անեք: Պարոն Քոչարյան, 8-9 տողանոց նախադասություն ունեք, ձեր ոճը ձեր դեմ է աշխատում: Իմ առաջարկն է, որ որոշ բաներ կրճատեք և չունենաք ծավալի հետ կապված խնդիր: Ես կարող եմ ձեզ հետ աշխատել, օգնել, այն մասերը, որոնք խնդրահարույց են՝ լուծել, աշխատե; ձևակերպման հետ կապված, իրականության հետ կապ չունեցող, հակագիտական պնդումների շուրջ և նաև պետք է նշեմ, որ որոշ հատվածներում կա քրիստոնեական-կրոնական քարոզչություն, որը դիսերտացիայում ընդունելի չէ: Դուք գիտական աստիճանի համար եք հայցում, ուրեմն պետք է այստեղ գիտություն լինի և հաճախ խոսում եք գիտությունների մասին, որոնք 5-րդ դարում գիտություն չէին կարող լինել: Եվ վերջում՝ մի՞թե Խորենացին այդքան իդեալական է, որ դուք Ձեր դիսերտացիայի մեջ մեկ պարբերություն նույնիսկ քննադատություն չունեցաք:»
Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը խոսքը տրամադրեց փիլ.գիտ.թեկնածու, դոցենտ Դավիթ Մոսինյանին, ով նշեց.«Ես գրքին եմ ծանոթ, համեմատեցի տեսա, որ բավական տարբեր են գիրքն ու ատենախոսությունը, ինչ վերաբերում է գրքին, կարծում եմ և՛ խորենացիագիտության, և՛ հերմենևտիկայում չափազանց լուրջ գիտական լումա է ներդրել պարոն Քոչարյանը, մյուս կողմից էլ գրքի հետ կապված հարց չունեմ, որովհետև բավականին հոգեհարազատ դիրքորոշում և դիտարկումներ կան, բայց այն ինչ հիմա ես կասեմ վերաբերում է ատենախոսությունը: Ատենախոսությունը ունի որոշակի պահանջներ և այդ պահանջներից մեկը, կապված է մեթոդաբանության հետ, մյուսը՝ գրականության: Ատենախոսությունը ենթադրում է որոշակի հետազոտություն և այդ հետազոտության մեջ պետք է հիմնավորենք թե այդ մեթոդաբանությունը ինչով է հարմար:Պարոն Քոչարյանն արդեն իսկ այդ հարցին պատասխանեց՝ ասելով որ արդյունքները եղել են բավականին նորարար, այդ պատճառով էլ կարելի է արդեն արդարացված համարել այդ մեթոդաբանությունը: Այս ձևի հետազոտությունները, այսինքն՝ պատմափիլիսոփայական՝ կա՛մ չկան կա՛մ շատ քիչ կան, ավելի ամբողջական լինելու համար գուցե պետք էր հնարավորինս ինտեգրել այլ գրականություն և այլ աղբյուրներ: Առաջին հեղինակը որ եկավ մտիքս, չգիտեմ ծանոթ եք թե ոչ Գաբրիել Սուլթանյանն էր, որ գրել է «Խորենացին և հայոց պատմությունը»: Երկրորդ՝ քանի որ փիլիսոփայական առումով կապեցիք Դավիթ Անհաղթի հետ, չգիտեմ տեղյակ եք թե ոչ, որ Միսաք Խոստիկյանը Բեռլինում պաշտպանել է ատենախոսություն «Դավիթ փիլիսոփա» վերնագրով և նրա հիմնական թեզը եղել է այն, որ Դավիթ Անհաղթ հայ փիլիսոփա գոյություն չի ունեցել, իհարկե դա կարող ենք հաշվի չառնել, բայց կարծում եմ ատենախոսության մեջ կարելի է անդրադառնալ, եթե անդրադառնում եք նաև Դավիթ Անհաղթին: Մյուս աղբյուրների հետ կապված որ կուզեի ասել հետևյալն է, քանի որ դուք նշեցիք, որ միջնադարում պատմագիտությունը կայացած էր, ես կցանկանայի տեսնել ուսումնասիրված տեքստը տվյալ ժամանակաշրջանի այլ պատմական տեքստերի հետ հարաբերության մեջ, օրինակ Եվսեբիոս Կեսարացին, որը եկեղեցական պատմության հիմնադիրն է և Խորենացու գրքում էլ հիշատակվում է: Ես շատ կուզեի տեսնել թե ինչպես է ազդել Եվսեբիոս Կեսարացին, պետք է նշեմ, որ նա նաև փիլիսոփայորեն արժևորված է: Շատ կուզեի տեսնել Վեղեր

Պատելլյն,որը անգլիական միջնադարյան պատմության հիմնադիրն է և դարձյալ շատ լավ ուսումնասիրված փիլիսոփայական տեսանկյունից: Ատենախոսության մեջ մի քանի անգամ այսպիսի բան տեսա, օրինակ ժամանակակից պատմագիտությունում կա կայուն միտում, որ պատմության տեսություն կա՝ փիլիսոփայության չկա, կարծում եմ այստեղ կա չափազանցություն, կան ժամանակակից պատմաբաններ, որոնք նաև շատ լուրջ փիլիսոփայական հարցեր են լուծում, օրինակ Ֆրանկ Անկերսմիթը, Հայդըն Ուայթը: Սրանք մարդիկ են, ովքեր փիլիսոփայական հարցեր են դրել պատմության մեջ և փորձել են կարևորել պատմության փիլիսոփայական կողմը և էլի մարդիկ ովքեր տեսական հարցերով են ավելի շատ զբաղվել և լուրջ հարցեր են դրել՝ թե ինչպես է անհրաժեշտ մոտենալ միջնադարին: Ես ոչ թե ասում եմ պետք է այդպես մոտենալ, այլ նշում, որ քանի որ ձեզ մոտ կա այլ դիրքորոշում, գուցե անհրաժեշտ էր ինչ-որ կերպ քննադատել,անրդադառնալ այս հեղինակներին, հակառակ դեպքում կարող է տպավորություն ստեղծվել, որ Ձեր աշխատանքը ոչ թե այդ ժամանակաշրջանի տրամաբանական տեքստերի համաշարադրանքում եղած կշռադատումներ են, այլ պարզապես որոշակի սուբյեկտիվ ցանկություն կամ տպավորություն է:»

Արտահայտվեց նաև փիլ.գիտ.թեկնածու, դոցենտ Աշոտ Գևորգյանը, ով նշեց.

«Ես էլ պետք է իմ դիտարկյունից ասեմ, որ աշխատանքը բավականին հետաքրքիր է, եթե վերանանք ոճական այն խնդիրներից որոնց մասին արդեն խոսեցինք, ընդհանուր առմամբ աշխատանքը գրավող է, խնդիրները կանչող են: Չեմ ուզում կրկնել, եթե միքիչ հղումներ անենք ժամանակակից գիտաչափական խնդիրներին, որոնք այսօր կան, որոնք առաջադրվում են որպես խորհուրդ հետազոտողներին,կարող ենք հետևել որոշակի չափանիշների, որոնց մեջ կարևոր տեղ է զբաղեցնում լակոնիկությունը: Իհարկե միշտ կարելի է հակադարձել, որ յուրաքանչյոր հետազոտող իր սեփական ոճն ունի, բայց ընդհանուր առմամբ իմ դիտողությունները միայն դրան էին վերաբերվում, բովանդակային առումով այդքան խորությամբ թեմային չեմ տիրապետում:»

Դասախոս Նելլի Պետրոսյանը անդրադառնալով աշխատանքին ասաց.«Ամբողջությամբ ծանոթ չեմ աշխատանքին, որքանով որ հնարավոր է եղել ծանոթացել եմ: Աշխատանքը հետաքրքիր է, նեղ մասնագետների համար՝ արժեքավոր: Համաձայն եմ իմ ավագ կոլեգաների հետ, իհարկե շտկումներ կարելի է անել, ուղղագրական սխալներ ես էլ գտա և նախադասությունների հետ էլ կապված դժվարությունները շատ էին, ինձ շատ հետաքրքիր էր բառերը հայերեն տարբերակով ներկայացնելը, բացատրությունները: Ցանկանում եմ նշել մեկ բան ևս, Արծրուն Սահակյանի վերջին գիրքը ևս հետաքրքիր կլինի այս թեմայի համար, նա ևս ուսումնասիրել է վերջին ժամանկներում Մովսես Խորենցու բնագիրը: Այդ գիրքը չէիք օգտագործել հետաքրքիր է իմանալ, որևէ հետաքրքիր բան չգտա՞ք այդ գիրքը զետեղելու համար:»

Դասախոս Մարինե Շահբազյանը հավելեց.«Ես կարդացել եմ 4-րդ գլուխը, ինձ հետաքրքիր էին զույգ բառերը: Բարդության առումով պետք է ասեմ, որ շատ նախադասությունների հանդիպեցի, որոնք կարդում էի և պարզապես չէի հասկանում իմաստը: Ընդհանուր առմամբ նոր ու հետաքրիքր բաներ սովորեցի:

Ամփոփելով՝ Ամբիոնի վարիչ փիլ.գիտ.դոկտոր, դոցենտ Հասմիկ Հովհաննիսյանը նշեց. «Ձևակերպումների առումով խրթինությունը գալիս է ձեր նյութերից, որովհետև դուք խոսում եք հստակ, ճշգրտված և ձեզ ընկալելու խնդիր բանավոր խոսքի

ժամանակ չունենք, բայց գործը դժվարություն ստեղծում է: Եթե դուք գիտական աստիճանի ստանալու խնդիր ունեք, ապա վաղը մեզ ԲՈԿ-ում պետք է ասեն, եթե աշխատանքին քվեարկել եք կողմ, ապա խնդրում ենք ասել՝ ինչպես եք հասկացել այս միտքը և կա խնդիր պատասխանելու, որ միտքը չի հասկացվել: Ընդամենը պետք է ձևակերպումների վրա աշխատել և դուք դա կարող եք անել:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Ռոմիկ Քոչարյանին տրամադրել ժամանակ աշխատանքում շտկումներ կատարելու համար և դարձյալ կազմակերպել քննարկում:

Ամբիոնի վարիչ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նիստի քարտուղար՝ Տ. ԱՐՇԱԿՅԱՆ